Ողբերգությունն այն է, որ ՀՀ իշխանությունները Ռուսաստանի հետ ռազմատեխնիկական կապերի խզումը ներկայացնում են իբրեւ ձեռքբերում՝ ռազմատեխնիկական ասպարեզում դիվերսիֆիկացիա: Իբրեւ թեւ ՌԴ-ին փոխարինող 2 երկիր են գտել՝ Հնդկաստան եւ Ֆրանսիա: Հնդկական սպառազինությունը նույնիսկ Հնդկաստանի ԶՈՒ-ին է դեռ անծանոթ:

Կարդացեք՝ էջ 6



Սիրելի բարեկամներ, Նիկոլը քողարկված Էրդողան եւ Ալիեւ է՝ միասին վերցրած: Մեր ժողովրդին, ընդդիմությանը հազար անգամ կոչ արեցի, որ կանգ չառնեն ոչ մի զոհողության առաջ, իջնեն հրապարակ եւ դավաճանից վերցնեն իշխանությունը: Բայց անկար հնազանդությամբ մեր ժողովուրդը կրում է այդ անարգանքը եւ ծանր ստորացումը:

Կարդացեք՝ էջ 7

Այդ գեղեցկուհու կույրաղիքը, որը կոչվում էր Արծվաշեն, դեռ Սովետի օրոք խորամանկ գազանն անջատել էր կնոջ մարմնից, հիմա առաջարկում է վերադարձնել այդ անիմաստ դարձած օրգանը՝ փոխարենը պահանջելով իրեն հանձնել աղջկա սիրտը, լյարդը եւ թոքը, որոնք կոչվում են Վերին Ոսկեպար, Բարխուդարլու-Սոֆուլու եւ Տիգրանաշեն:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 85 (4220), 27 մայիս, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Վելի քան երեք տարի է՝ ՀՀ իշխանությունները չեն կարողանում անգամ զինվորական նոր համազգեստի հարցը լուծել, թեպետ մեծ-մեծ խոսում են բանակը սպառազինելու, մարտունակ դարձնելու մասին: Սուրեն Պապիկյանն Ազգային Ժողովում դեռեւս 2023 թ. նոյեմբերի 15-ին, կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ խոստանում էր, որ մինչեւ 2024 թվականը նոր համազգեստը պատրաստ կլինի, այժմ 2026-ի կեսն ենք հատել, սակայն հայկական բանակը հին համազգեստի հույսին է դեռ: Մեր տեղեկություններով, իշխանությունները մոտ 5 հազար նոր համազգեստ են ձեռք բերել, որոշ տեղեկություններով՝ ամերիկյան ընկերություններից, որպեսզի մայիսի 28-ի զորահանդեսին մասնակցող զինվորականները նոր համազգեստով ներկայանան, սակայն ամբողջ բանակին նոր համազգեստը, ըստ հրամկազմի, հասանելի կդառնա միայն եկող տարվա վերջին: Ի դեպ, զորահանդեսից առաջ արդեն քանի օր է՝ շքերթի փորձերի անվան տակ ռազմական տեխնիկան մայրաքաղաքի փողոցներով պտտեցնում են: Մասնագետներն ասացին, որ դրանք հիմնականում հնդկական տեխնիկա են՝ պիկապ ավտոմեքենաներ, զինվորական բեռնատարներ: Իսկ Զինված ուժերի հրամանատարական կազմն ի սկզբանե դժգոհ է եղել նոր տեխնիկայի որակից, եւ կարծես չեն սխալվել. մեզ ասացին, որ հենց փորձերի ժամանակ մի քանի պիկապի շարժիչը խափանվել է:

ԲՊ-ն հիմիկվանից պատրաստվում է նախընտրական ամփոփիչ հանրահավաքի: Իշխող թիմում «համար 1» դրություն է հայտարարվել՝ բոլոր մարզպետերը, համայնքապետերը զգուշացվել են, որ մարդ պետք է բերեն Երեւան, որպեսզի մարդաշատ հանրահավաք անցկացնեն, անգամ պետաշխատողներին չեն խնայելու, հրաժարվողներին սպառնում են ազատել աշխատանքից: Հանրահավաքը նախատեսված է անցկացնել Հանրապետության հրապարակում: Նախատեսում են փաշինյանական թեւի հոգեւորականների մեծ մասնակցություն եւ այդ պարտականությունը դրել են Արարատյան թեմի առաջնորդ՝ տիրադավ Նավասարդ Կճոյանի վրա, որը պետք է հնարավորինս շատ բացահայտ կամ ծպտյալ տիրադավներ բերի՝ ի աջակցություն իշխանությունների: Սա, իրականում, ոչ այնքան հաղթանակի հանրահավաք է լինելու, որքան իշխանազավթման արարի եւ հաղթանակի ներշնչման արարողություն: Նշենք, որ հունիսի 3-ին ամփոփիչ հանրահավաք է պատրաստվում անել նաեւ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը, կրկին՝ Հանրապետության հրապարակում:

ԻՆՉ ԷԻՆ՝ ԻՆՉ ԴԱՐՁԱՆ

Ինչքան զազրելի որակներ գեներացրեց 2018-ին իշխանության եկած երիտասարդների խումբը, որն իբրեւ թե մարդու իրավունքների, ժողովրդավարության ջատագովն էր, գալիս էր հանրությանը ծառայելու, պետությունը զարգացնելու: Որոնք իբրեւ թե լավ կրթություն էին ստացել եւ պետք է տարբերվեին նախկին իշխանություններից՝ իրենց առաջադեմ արեւմտամետ հայացքներով, երիտասարդական ավյունով ու հումանիզմով: Հետո պարզվեց, որ մարդու իրավունքները շիրմա են, որի քողի տակ պայքարում էին իշխանության գալու համար: Ժողովրդավարությունն ու արդար ընտրությունները կարեւոր էին, որպեսզի իրենց ընտրեն, իսկ երբ արդար ընտրության արդյունքում իրենք չեն ընտրվում, դրանք այլեւս կարեւոր ժողովրդավարական գործիք չեն: Այնպես, ինչպես Ընտրական օրենսգիրքը վատն էր, քանի դեռ դրա արդյունքում իրենք չէին ընտրվում, իսկ երբ այդ օրենսգրքով սկսեցին իրենք ընտրվել, պարզվեց՝ շատ էլ լավ օրենսգիրք է, եւ ոչ մի էական դրույթ փոխելու կարիք չկա: Պարզվեց նաեւ, որ պետությանն անշահախնդիր ծառայելը նշանակում է միլիոնների հասնող աշխատավարձեր ու պարգեւավճարներ: Լավ կրթությունն էլ օգնում է իրենց բոլոր սխալներն արդարացնելու, օրենքներն այնպես վերաձեւելու համար, որ իշխանական վերնախավը պաշտպանված լինի: Իսկ հումանիզմը բացառապես իրենց համակրող մարդկանց ուղղված հատկություն է՝ սիրում են ՔՊ-ականներին ու ՔՊ սիրողներին: Երիտասարդական ավյունն էլ նրա համար է, որ անհոգնել քարոզարշավ անեն եւ երրորդ անգամ իշխանություն գրավեն, չնայած իշխանության են եկել Սերժ Սարգսյանի՝ երրորդ փուլ պաշտոնավարումը մերժելու լոզունգների ներքո: Պատմությունը երեւի այսքան կարճ ժամանակում այսպիսի խայտառակ դեֆորմացիա, նախկին սկզբունքներին ու կարգախոսներին այսպես դավաճանելու ուրիշ դեպք չի հիշում:

Երեկ կարճատեւ այցով Երեւան ժամանեց ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն, որը «Զվարթնոց» օդանավակայանի տարածքից դուրս չեկավ, հենց տեղում կեսժամանոց հանդիպում ունեցավ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ՝ նախագահական սրահում, չհանդիպեց Փաշինյանի հետ: Հայտարարվեց փոխըմբռնման հուշագիր ստորագրելու մասին: Ըստ մեր աղբյուրների՝ հուշագիրը որեւէ կարեւորություն չունեցող փաստաթուղթ է, իսկ Ռուբիոյի այցը կազմակերպվել է ընդամենը հօգուտ Փաշինյանի մի քանի ձայն ավելացնելու համար: Բանն այն է, որ մայիսի սկզբներին Հայաստանում կայացած ԵՄ գագաթնաժողովը, ըստ սոցհարցումների, մի քանի սեգմենտում մի չնչին չափով բարձրացրել է իշխանության վարկանիշը, ՔՊ-ի արտաքին հովանավորները փորձում են նույնը կրկնել:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՉԱՂ ՌՈՒՍՏԱՄԻՆ

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի Ավանի նստավայրում երեկ տեղի է ունեցել քրեական հեղինակություն Չաղ Ռուստամի՝ Ռուստամ Ստեփանյանի գործով հերթական դատական նիստը: Նիստում քննարկվել է խափանման միջոցի հարցը, դատարանն ընտրված խափանման միջոց կալանքը թողել է անփոփոխ, նիստի ժամանակ կողմերը հանդես են եկել ճառերով: Մեղադրող դատախազը դատարանից պահանջում է կայացնել մեղադրական վերդիկտ, պաշտպանական կողմը՝ արդարացում: Հաջորդ դատական նիստում՝ հունիսի 10-ին, դատարանը կհրապարակի վերդիկտը: Ըստ մեղադրական եզրակացության՝ Սերգեյ Գրիգորյանին ապօրինաբար կյանքից զրկելու նպատակով Ռ. Ստեփանյանը մի խումբ անձանց՝ Ա. Կուրեղյանի, Հ. Սահակյանի եւ Սու. Գրիգորյանի հետ նախնական համաձայնությամբ, ապօրինի ձեռք բերված հրազենով կազմակերպել եւ ղեկավարել է հանցակիցների գործողությունները, որոնց անմիջական մասնակցությամբ 2024թ. հունիսի 11-ին, ժամը 23:15-ի սահմաններում սպանել են Ս. Գրիգորյանին: Քննությամբ պարզվել է, որ «Չաղ Ռուստամ» անվամբ հայտնի Ռ. Ստեփանյանի եւ «Ֆազ» անվամբ հայտնի Ս. Գրիգորյանի միջեւ, անձնական հարցի կապակցությամբ, դեռեւս 2018-ից ձեւավորված են եղել թշնամական հարաբերություններ: Իրավիճակն առավել լարվել է 2020թ. դեկտեմբերին, որի պատճառը եղել է Ռ. Ստեփանյանի մտերիմ անձի ինստագրամյան էջից սեռական բնույթի հայհոյանքների տեսքով մեկնաբանություններ գրելը Ս. Գրիգորյանի եւ վերջինիս մտերմուհու վերաբերյալ:

ԸՆԴԳԾ

«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ՎԱՐՁՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՉԵՆ ՏԱԼԻՍ

«Ուժեղ Հայաստան» դաշինքի ներկայացուցիչները պատմում են, որ համատարած արգելվում է իրենց աջակիցներին եւ համակիրներին տարածքներ տրամադրել՝ նախընտրական շտաբների համար: Բացի դա, ունենք տեղեկություններ, որ տարբեր բիզնես

«ՏԵՍԱՆ ՆԺԴԵՀԻ ՆԿԱՐԸ, ՍԱՄՎԵԼԻ ԲՈՒԿԼԵՏԸ, ՀԱՆԵՑԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ». «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ՎԱՐՁՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՉԵՆ ՏԱԼԻՍ

ազգային հերոսների նկարներն են եղել կախված, իսկ սեղանին Սամվել Կարապետյանի նախընտրական բուկլետներն են դրված եղել: Հաջորդ օրը տվյալ հաստատության տնօրենը մոտեցել է Ա. Ա.-ին եւ խնդրել է ազատել տարածքը, քանի որ այդտեղ քաղաքապետարանը պատրաստվում է բարեգործական ճաշարան բացել: Թեքվոնդոյի մարզիչը համոզված է, որ այս որոշումը քաղաքական ենթատեքստ ունի՝ եթե չլիներ քաղաքապետարանի անսպասելի այցը, իրեն ու իր սաներին տարածքից չէին հանի: «Տեսան Նժդեհի նկարը, Սամվելի բուկլետը, դուրս հանեցին տարածքից»,- ասում է նա:

Այսպիսի դեպքերը թե՛ Երեւանում, թե՛ մարզերում քիչ չեն: Մեր աղբյուրը հայտնում է մի պաշտոնյայի մասին, որի որդին Երեւանում վարձակալությամբ տարածք է հանձնում: Վերջերս այն վարձակալել են «Ուժեղ Հայաստանի» անդամները՝ որպես նախընտրական շտաբ ծառայեցնելու նպատակով: Այս մասին իմացել է տարածքի սեփականատիրոջ պաշտոնյա հոր ղեկավարը, իր մոտ է հրավիրել պաշտոնյային եւ դրել է այլընտրանքի առաջ՝ կամ որդին դուրս կհանի ընդդիմադիր վարձակալին, կամ էլ ինքը կազատվի աշխատանքից: Բնականաբար, պաշտոնյան ընտրել է աշխատանքը, եւ «Ուժեղ Հայաստանի» համակիրների հետ պայմանավորվածությունը խզվել է:

Երեւանում եւ մարզերում նախընտրական շտաբների համար վարձով տարածքներ ձեռք բերելու խոչընդոտների վերաբերյալ դաշինքը հայտարարություններ չի անում: Այս մասին ներքին պայմանավորվածություն կա: «Մենք հակված ենք այդ դժվարությունները շրջանցել, դրանց մասին չխոսել, որպեսզի վախի մթնոլորտ չտարածենք»,- ասում է «Ուժեղ Հայաստան» կուսակցության խոսնակը, կարծես սարսափը նոր էր տարածվելու:

«Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչ **Դավիթ Ղազինյանը** մեզ հետ զրույցում հաստատեց, որ, այո՝ ունեն ահազանգեր, որ նախընտրական շտաբների համար տարածքներ վարձակալելու հարցում կան բարդություններ: «Անուններ չտամ, որ չթիրախավորեմ մարդկանց, բայց տոտալ, երկու տեսակի խնդիր ունենք: Ովքեր որ համաձայնում են տալ տարածքներ, չասեմ՝ բոլորին, բայց որոշակի մասին ճնշում են, որ չտրամադրեն տարածք: Եվ կան դեպքեր, երբ մարդիկ արդեն տվել են իրենց տարածքները, նրանց ճնշել են ու ստիպել, որ հետ վերցնեն: Սկզբից, երբ որ նոր էինք շտաբները ձեւավորում, նման դեպքերը շատ-շատ էին, բայց հիմա վախի մթնոլորտը որոշակի չափով կոտրվել է: Ոչ թե թուլացրել են ճնշումները, այլ լավ օրինակով վարակելով, մթնոլորտը կոտրվեց»,- մեր հարցերին ի պատասխան՝ ասում է Դավիթ Ղազինյանը:

Կան դիտորդական կազմակերպություններ, օրինակ, Դանիել Իոանննիսյանը, որը դիտարկումներ է անում ու պարբերաբար հրապարակում, նրանք չե՞ն հետաքրքրվում ձեր նշած ահազանգերով: «Կոնկրետ Ձեր նշած անձը՝ ոչ, բայց, ընդհանուր առմամբ, մեզ մոտ գալիս են դիտորդներ: Միջազգային դիտորդների ենք հանդիպում եւ այդ ամբողջ ինֆորմացիան տալիս ենք: Հիմա տեսնենք, թե ինչ եզրակացության կգան»:

Դավիթ Ղազինյանը նաեւ հայտնեց, որ այս օրերին եւս անթիվ-անհամար ճնշումներ են եղել, իրենց ակտիվիստների եւ համակիրներիր ձերբակալություններ, ազատազրկումներ: «Կոնկրետ թիվ չեմ կարող ասել այս պահին, բայց անընդհատ ավելանում են նման դեպքերը»,- ասում է Դավիթ Ղազինյանը: Ամենօրյա ռեժիմով հրապարակվող ընտրակաշառքի վերաբերյալ ձայնագրությունների մասին էլ հարցրինք, թե իր համար տարօրինակ չէ՞ այն, որ մարդիկ, տեսնելով, որ տոտալ ձայնագրում են, էլի իրար զանգում են ու փողի մասին են խոսում հեռախոսով: «Նախ՝ ֆիքսենք, որ ընտրակաշառքի դեպք, որպես էդպիսին, չի բացահայտվել: Ընտրակաշառքն ինչ-որ մեկին նյութապես շահագրգռել կամ խոստանալն է՝ պահանջելով նրա ձայնը: Բայց այդպիսի դեպք չունենք: Գրվում են ենթադրություններ: Օրինակ, մարդուն աշխատանքի են ընդունել, որովհետեւ ընտանիքը մեծ է՝ ակնկալելով ձայները: Բայց կոնկրետ ինչ-որ մեկին աշխատանքի ընդունելիս որ մենք ասենք՝ էսքան ձայն բեր, չկա նման բան: Երկրորդ. Հակակոռուպցիոն կոմիտեն անմեղության կանխավարկած է խախտում՝ այդ ամենը ներկայացնելով որպես դատարանի վճիռ՝ մեղադրանքն ապացուցված է, դատավճիռն էլ հակակոռուպցիոնից կա, ինչը խայտառակություն է մեր պետության համար: Եվ երրորդ. ես անձամբ ձայնագրություններին չեմ հավատում: Եթե անգամ ինչ-որ բան էլ լինի, միանշանակ, կտրված է կոնտեքստից»,- պատասխանեց Ղազինյանը՝ չբացառելով նաեւ, որ ներդրված մարդիկ լինեն ձայնագրողները: «Ինձ էլ են շատ Ֆեյսբուքով գրում, զանգում, թե օգնության կարիք ունենք, ու համոզված եմ, որ դրանց մի մասը պրովոկացիա է անում»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԱՐՑԱԽՅԻ ԱՂՋԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՎԻՐԱՎՈՐԵԼ ԵՆ, ՀԱՐՎԱԾԵԼ, «ԹՈՒՐՔ» ԱՆՎԱՆԵԼ

Հմանալով, որ լրագրող եմ, Նոյեմբերյանում ինձ մոտեցան Արցախից բռնագաղթած ամուսիններ եւ պատմեցին, որ իրենց դուստրը՝ Անի Առուստամյանը, Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոցում հալածանքների է ենթարկվել՝ նրան հարվածել են, վիրավորել: Մեր զրույցի ընթացքում նրանք ցույց տվեցին Նոյեմբերյանի գլխավոր՝ Երեւանյան փողոցում հեծանիվ վարող գիրուկ մի տղայի՝ ասելով. «Մեր Անիին նեղացնողներից մեկն էլ այս տղան է»: Տղան, տեսնելով մեր հայացքները, հեծանիվն արագ վարեց ու հեռացավ:

46-ամյա Սամվել Հայրապետյանը ծագումով Մարտակերտի շրջանի Հոռաթաղ գյուղից է, աշխատել է Կաշենի ոսկու հանքում, հետո Արցախի դիրքերում մարտական հերթապահություն է իրականացրել: Նրա կինը՝ Նարինե Միքայելյանը, Ստեփանակերտում է բնակվել, Անին նրա միակ երեխան է: Ամուսնալուծված Նարինեն եւ Սամվելն ամուսնացել են Արցախից Հայաստան բռնագաղթելուց հետո: Սամվելը հայտնեց՝ թեեւ Անին իր հարազատ դուստրը չէ, սակայն ինքը նրան հարազատի պես է սիրում, եւ իսկական ծնողը նա է, որը սիրում եւ հոգ է տանում երեխայի հանդեպ: 5-րդ դասարանն այս տարի ավարտած Անին առողջական խնդիրներ, հաշմանդամություն չունի, մեր հանդիպման ժամանակ երեխայի աչքերում անանց տխրություն նկատեցի: Նրա մայրը՝ Նարինեն պատմեց, որ Անին սթրես է տարել: 44-օրյա պատերազմի ժամանակ Ստեփանակերտում նրանց դպրոցը հրետակոծվել է, աղջկա աչքի առաջ զոհվել են 3 դասընկերները: «Երբ հիշում է իր դասընկերների զոհվելու պահը, վերանում է, այդ պահին մեզ չի լսում»,- պատմեց աղջկա մայրը: Պատմեց նաեւ, որ Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոցում համադասարանցիներից ոմանք ոտքով հարվածել են Անիին, նրան վիրավորել՝ ասելով. «Այ թուրք, այ ղարաբաղցի»: Նարինեն ինձ պատմեց, որ երբ վատ վերաբերմունքի համար հանդիմանել է Անիին նեղացրած համադասարանցի աղջկան, այդ աղջիկն իրեն վիրավորել է՝ ասելով. «Անդաստիարակ»: Ծնողները հայտնեցին՝ երբ դպրոցում երեխաները նեղացրել են Անիին, նա չի ցանկացել դպրոց հաճախել: Սամվել Հայրապետյանն ասաց, որ չի կարող Անիին վիրավորած երեխաների հետ կոնֆլիկտի մեջ մտնել՝ վախենալով, որ կարող է կորցնել ինքնատիրապետումը: Ծնողները ոստիկանություն են դիմել, ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի սպան՝ Մամյան ազգանունով (նրա անունը Անիի ծնողները չեն հիշում), գնացել է Նոյեմբերյանի դպրոց, խնդրի առնչությամբ հանդիպել դպրոցի տնօրենին:

Բայց փոքրիկ աղջկա սթրեսային վիճակի պատճառը միայն պատերազմից ծանր հիշողություններն չեն, այլ նաեւ՝ Նոյեմբերյանում նրանց բնակության պայմանները: Ընտանիքը նախկինում վարձով ապրել է Նոյեմբերյան քաղաքում, այժմ բնակվում են Նոյեմբերյանից մոտ 10 կմ հեռավորությամբ գտնվող սահմանամերձ Բերդավան գյուղում՝ Սամվել Հայրապետյանի հոր գնած տանը: Այդ տանն ապրում է նաեւ Սամվելի եղբոր ընտանիքը՝ անչափահաս 4 երեխաներով: Սամվելի ծնողները վատառողջ են, հայրն Արցախում կոնտուզիա է ստացել: Այդ մարդիկ Արցախում իրենց տունը, ապրուստը կորցնելով, լինելով վատառողջ, նյարդային են, հաճախ դուրս են գալիս հունից, եւ մի տան մեջ ապրելը բավականին բարդ է: Սամվելը ՀՀ քաղաքացու անձնագիր ունի, սակայն Նարինեի՝ քաղաքացիություն ստանալու գործը ձգձգվել է, նրա փաստաթղթերն անձնագրերի եւ վիզաների վարչությունում են՝ անձնագիրը չեն տալիս: Նարինեի՝ ՀՀ քաղաքացի դառնալու դեպքում նրանք կարող են բնակարանային ապահովման պետական ծրագրով Նոյեմբերյան համայնքում տուն գնել: Բռնագաղթած ընտանիքը գոյության միջոցներ չունի: Նարինեն չի աշխատում, Սամվելը սոցիալական ինչ-որ ծրագրով 6 ամիս աշխատել է Նոյեմբերյանի կոմունալ հիմնարկությունում, սակայն այդ ծրագիրն ավարտվել է: Նա շատ է ցանկանում հիմնական աշխատանք ունենալ: Ներկայում պետության կողմից միակ աջակցությունն Անի Առուստամյանի համար տրվող ամսական 30 հազար դրամն է: Բայց քանի որ Անիին Նոյեմբերյանի դպրոցում պարբերաբար նեղացնում են, եւ Բերդավանում էլ բնակության դժվար պայմաններ են, ամուսինները մտադիր են Անիին ուղարկել Կոտայքի մարզի Գեղադիր գյուղ՝ Նարինե Միքայելյանի մոր տուն: Ընտանիքը հայտնվել է դժվարին իրավիճակում, ֆինանսական եւ բարոյական աջակցության կարիք ունի: Բարեգործություն անելու մտադրություն ունեցող մարդկանց ու հիմնադրամներին կոչ ենք անում՝ աջակցել այս ընտանիքին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Մաս II

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱՄԵՔԵՆԱՆ ԿԵՂԾԵԼ Է IRI-Ի ՀԱՂՈՐԴԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Թերեւս, սա է բացատրությունը, թե ինչու էր Փաշինյանն անցյալ շաբաթ, խելագարված, Երեւանի փողոցները չափչփում, ում վրա ասես՝ բղավում: Կարծում եմ՝ այն, որ Սամվել Կարապետյանը մասնակցելու է առաջիկա խորհրդարանական ընտրություններին, ինքը դրան չի խոչընդոտելու, հետեւաբար՝ հնարավոր է, որ Կարապետյանն էլ կազմավորելու է հաջորդ կառավարությունը, Փաշինյանը գիտակցել է դեռ անցյալ տարեվերջին, երբ Սամվել Կարապետյանի կալանքը փոխարինվել է տնային կալանքով:

Սակայն մի բան է Սամվել Կարապետյանի՝ իշխանության գալու հնարավորությունը գիտակցելը, բոլորովին այլ բան է իրականությանը բախվելը, որ այդպես պատահում է: Դա ոչ միայն Սամվել Կարապետյանի մտածված, ծրագրված ընտրարշավից է տեսանելի, երբ իր գիտակից եւ հավասարակշիռ դիրքորոշմամբ Կարապետյանն ակնհայտորեն Արեւմուտքին նախընտրող, Փաշինյանին մերժող հսկայական ընտրազանգվածին բերում է ընտրության մասնակցելու տրամադրության եւ հավակնում է նրանց ձայներին: Այդ տեղաշարժը IRI-ն է արձանագրում՝ ի դեմս ամենադինամիկ ընդդիմադիր մրցակցին հասանելի՝ քվեների 44% ռեսուրսի՝ Փաշինյանի 32%-ի դիմաց:

Ավելին, IRI-ի փետրվարին անցկացված եւ հրապարակված հարցախույզում, որտեղ հեռախոսազանգեր ստացած քաղաքացիների ավելի մեծ տոկոսն է համաձայնել մասնակցել հարցախույզին՝ 22%, Փաշինյանին ընտրող քաղաքացիների թիվը եղել է 32%-ից շատ ավելի ցածր՝ 24%: Հասկանալի է, մայիսին ոչ թե Փաշինյանի վարկանիշն է բարձրացել (ինչը տարօրինակ կլիներ), այլ հարցախույզի մասնակիցների տոկոսն է նվազել՝ 22%-ից 16%, ինչի արդյունքում էլ պրոնիկոլական դիրքորոշում ունեցողների տեսակարար կշիռը հարցվողների թվում մեծացել է:

Փաշինյանի ձայները 24%-ի՞ն ավելի մոտ կլինեն, թե՞ 32%-ին, կերեւա հունիսի 7-ին: Թե Սամվել Կարապետյանը չկողմնորոշված կամ իր ընտրությունը բացահայտելուց հրաժարվող 44% ռեսուրսի որ մասը կհաջողի դարձնել «Ուժեղ Հայաստանի» ձայներ, նույնպես կերեւա հունիսի 7-ին: Մաղթենք, որ Սամվել Կարապետյանը տանի բոլոր 44% ռեսուրսային ձայները, Նիկոլ Փաշինյանն էլ գիտակցի, որ 24-32% ձայներով զբաղեցնելով երկրորդ հորիզոնականը եւ ընդդիմադիր օթյակը խորհրդարանում՝ ինքը եւ ՔՊ-ն ավելի մեծ ծառայություն կարող են մատուցել Հայաստանին, քան իշխանության ղեկին գտնվելով են կարողացել անել: ՔՊ-ն իշխանությունում միայն խորացնում է ներհասարակական անտագոնիզմը, մինչդեռ խորհրդարանական ընդդիմության դերում կդառնա այն անվտանգային բարձիկը, որը թույլ չի տա Հայաստանի խոտորում պրոարեւմտյան քաղաքական կուրսից: Կարապետյանը կկարողանա հավասարակշռել, սակայն չի կարողանա շեղվել: IRI-ի հարցախույզի տվյալները (դժվար է ասել՝ որքանով իրական, որքանով կամային) այդ սցենարն են ուրվագծում:

Այժմ վերջինը, փաշինյանական քարոզչամեքենայի կեղծարարություններին խնդրեմ, Դուք ո՞ր կուսակցության կամ դաշինքի օգտին կքվեարկեք 2026-ի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններում» հարցն է եւ IRI-ի հարցմանը մասնակցած 16% քաղաքացիների պատասխանները: Ինչպես տեսնում ենք էջից, ՀՀ քաղաքացիների 16%-ի 32%-ն ընտրում է Փաշինյանին:

Հարցախույզի 35-րդ էջին (հոդվածին կից կայքում տեղադրվում է) նույն՝ «Ասացեք, խնդրեմ, Դուք ո՞ր կուսակցության կամ դաշինքի օգտին կքվեարկեք 2026-ի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններում» հարցն է, որին պատասխանում են արդեն ոչ թե հարցմանը մասնակցած 16% քաղաքացիները, այլ այդ 16%-ից միայն նրանք, ովքեր ասել են, թե իրենք, մեծ հավանականությամբ, կմասնակցեն հունիսի 7-ի ընտրությանը (Spontaneous response: among those who say they are Very likely to vote, n=1,186): Այդ խումբը կազմում է 16%-ի 79%-ը (հարցախույզի 30-րդ էջ, հոդվածին կից կայքում տեղադրվում է): Այդ 79%-ի 38%-ն է, որ ընտրում է Փաշինյանին:

Ձեռնածությունը, կարծում եմ, ամենքն ընկալեցին, հարցը հաշվարկով եւ դիտավորությամբ կրկնվել է հարցախույզի մասնակիցների ավելի փոքր սեկտորի համար, որպեսզի Փաշինյանին կողմ ձայների ավելի մեծ թիվ ստացվի եւ որեւէ էջի վրա երեւա: Հետո արդեն՝ երկրորդ քայլով իշխանական քարոզչամեքենան դա կեղծարարությամբ հասարակությանը մատուցել է որպես հայաստանցիների կողմից Փաշինյանին տրվող ձայներ: Հարց-ձեռնածություն հնարավոր է եղել հարցախույզում ներառել, հետո էլ իշխանական քարոզչամեքենային մանիպուլացնել եւ տարածել որպես Փաշինյանին հայաստանցիների աջակցություն, շնորհիվ այն բանի, որ հարցախույզն անցկացնում է Երեւանում գործող հայաստանյան կազմակերպություն, որի գլխավոր հաճախորդների թվում է ՀՀ կառավարությունը:

Մյուս՝ ավելի ցնցող կեղծիքը. IRI-ի հարցախույզի 8-րդ էջում (հոդվածին կից կայքում տեղադրվում է) այսպիսի հարց է. «Ընդհանուր առմամբ, Ձեր կարծիքով՝ Հայաստանն ընթանում է ճի՞շտ ուղղությամբ, թե՞ սխալ»: IRI-ի հարցմանը մասնակցած 16% քաղաքացիների 61%-ը, ինչպես տեսնում ենք, պատասխանել է, թե երկիրն ընթանում է ճիշտ ուղղությամբ, 28%-ը՝ թե ընթանում է սխալ ուղղությամբ: Այնուհետեւ նույն էջի վրա, ըստ կուսակցական նախընտրությունների, պատասխաններ են ներկայացված: ՔՊ-Փաշինյան նախընտրողների 95%-ը գտնում է, որ երկիրն ընթանում է ճիշտ ուղղությամբ, Սամվել Կարապետյան-«Ուժեղ Հայաստան» նախընտրողների 83%-ը գտնում է, որ Հայաստանն ընթանում է սխալ ուղղությամբ:



Ահա, այս տվյալները (մի կողմ թողնենք՝ որքանով հավատարժան կամ ոչ), ինչպե՞ս է կեղծել Հայաստանի իշխանական քարոզչամեքենան: Նրանք «Արմենպրեսով» տարածել են լուր՝ «IRI-ի նոր հարցման մասնակիցների 61 տոկոսը կարծում է, որ Հայաստանն ընթանում է ճիշտ ուղղությամբ» վերնագրով (հասանելի է https://armenpress.am/hy/article/1251006 հղումով), որում ասվում է. «Մասնակիցների 95 տոկոսը կարծիք է հայտնել, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ընթանում է ճիշտ ուղղությամբ, 2 տոկոսը՝ սխալ, 3 տոկոսը չգիտի կամ հրաժարվել է հարցին պատասխանելուց: Հարցման մասնակիցների միայն 9 տոկոսն է համարում, որ «Ուժեղ Հայաստան» դաշինքն ընթանում է ճիշտ ուղղությամբ, 83 տոկոսը պատասխանել է, որ կուսակցությունը սխալ ուղղությամբ է ընթանում, 8 տոկոսը չգիտի կամ հրաժարվել է հարցին պատասխանելուց»:

Ահա, այս կարգի բարոյազրկություն, ստախոսություն եւ կեղծարարություն: Իսկ ամենաէականը՝ այս կարգի փուչիկներ փչելու ու դրանցից կախվելու հուսահատություն:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ ՈՒՆԵԶՐԿԵԼԸ, ՎԻՐԱՎՈՐԵԼՆ ԻՐ ԷԼԵԿՏՈՐԱՏԻՆ ՄՈՏԻՎԱՑՆՈՒՄ Է

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Հակոբ Բադալյանն** է:

- Ասում են, որ նախընտրական քարոզարշավի շրջանում ոմանց վարկանիշը, օրինակ, Ռոբերտ Քոչարյանի, աճում է, ոմանց վարկանիշը՝ նվազում: Ձեր գնահատմամբ՝ ինչ տրանսֆորմացիա է տեղի ունենում քարոզարշավի ընթացքում:

- Եթե խոսում ենք ընդդիմության վարկանիշի փոփոխության մասին, ապա այս պահին չկան հավաստի աղբյուրներ, որոնց վրա հենվելով անենք պնդումներ, որ, օրինակ, Ռոբերտ Քոչարյանի վարկանիշը բարձրացել է, Կարապետյանինը՝ նվազել եւ այլն: Ըստ իս՝ այս պահին խնդրահարույց է իշխանությունների վարկանիշի հարցը: Կա բավականին ակնառու վկայություն, եւ այն իշխանությունների բավականին էմոցիոնալ քարոզարշավն է: Ես, իհարկե, սա չեմ ասում այն տրամաբանությամբ, որ Նիկոլ Փաշինյանը տեսնում եւ գիտակցում է այդ ամենը եւ արդյունքում հունից դուրս է գալիս: Ոչ, նա պարզապես խաղադրույք է կատարում՝ գերէմոցիոնալ ոճի մեջ մտնելով: Դա նշանակում է, որ Փաշինյանը դիմում է ամենավերջին հույսին: Ընդդիմության պարագայում, եթե որոշակի վարկանիշային փոփոխություն տեղի ունենա, կարծում եմ՝ այն լինելու է դրական իմաստով: Թե ինչ կոնֆիգուրացիայով կլինի ընդհանուր պատկերը, կարծում եմ՝ այնքան էլ էական չէ, էականն այն է, որ ցանկացած հավանական կոնֆիգուրացիայով հնարավոր լինի երկրում կատարել իրավիճակի փոփոխություն:

- Նիկոլ Փաշինյանն արդեն խոսում է 2031 թվականին ինչ-որ ծրագիր իրականացնելու մասին, օրինակ՝ Գագիկ Ծառուկյանի առանձնատունը ծերերի կենտրոն դարձնելու: Ի՞նչ է ուզում ասել՝ ապագային հղում անելով:

- Սա նախընտրական տեխնոլոգիա է: Ցանկացած իշխանություն չի անում այնպիսի հրապարակային հայտարարություններ, որոնք խոստովանում են խնդիրների առկայությունը: Ի դեպ, ոչ միայն իշխանություններն են որդեգրում նման քաղաքականություն, այլեւ՝ բոլոր հայտ ներկայացրած ուժերը: Նրանք՝ բոլորն ուզում են ինքնավստահ երեւալ:

- Քոչարյանն ասում է, որ եթե Փաշինյանին հաջողվի իշխանություն վերցնել, ապա ընդդիմությունը հեղափոխություն կանի: Այսինքն՝ չի բացառում, որ կարող է Փաշինյանին ընտրություններով հեռացնելը ձախողվել:

- Ռոբերտ Քոչարյանի հայտարարությունն այն տրամաբանության մեջ էր, որ եթե Նիկոլ Փաշինյանն ընդդիմությունից խլի հաղթանակը, ապա այդ պարագայում է իրականացվելու հեղափոխություն: Այստեղ պատկերը փոխվում է: Եթե իշխանությունը կեղծի ընտրությունների արդյունքները եւ իր պարտությունը հաղթանակ ներկայացնի, ապա ընդդիմությունը պետք է իր քվեներին տեր կանգնելու մասին հայտարարի: Հակառակը կլիներ տարօրինակ: Այս պարագայում Քոչարյանի հայտարարությունը շատ բնական է:

- Փաշինյանը փրփուրներից է կախվում, նոր տեխնոլոգիաների է դիմում՝ նոր քվեներ կորզելու համար: Օրինակ՝ ասում է, որ հարուստներին է ունեզրկելու, հույս ունենալով, որ այնքան շատ են չար մարդիկ, որ հանուն հարուստի դժբախտանալու, պատրաստ են իրեն ընտրել: Դրսից եկող ազդակներ կան՝ աջակցության տեսքով, այցեր եւ այլն: Ստացվում է, որ Փաշինյանը ծանր վիճակում է, բայց միեւնույն ժամանակ մարդկանց է հայհոյում, քաշքշում, վիրավորում, հիասթափության ալիքը մեծացնում....

- Նիկոլ Փաշինյանը ոչ թե լրացուցիչ նոր ձայներ հավաքելու ուղղությամբ է աշխատում, այլ իր էլեկտորատը բյուրեղացնելու: Փաշինյանի էլեկտորատը կազմված է ակտիվ եւ պասիվ մասերից: Պասիվ զանգվածը պոտենցիալ Փաշինյան ընտրող է, սակայն տատանվում է՝ գնա՞լ քվեարկության, թե՞ ոչ, վստահ լինելով, որ հաստատապես Փաշինյանը հաղթելու է: Այժմ Նիկոլ Փաշինյանը փորձում է պասիվ շրջանակին եւս ակտիվացնել, քանի որ հաստատապես հաղթելու համոզմունքն իրատեսական չէ: Փաշինյանի համար նոր ձայներ հավաքելն անհնար է, իսկ իր էլեկտորատի համար հարուստներին ունեզրկելը, նրանց վիրավորելը որոշակի մոտիվացիա է:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՍ ՉԳԻՏԵՄ ՈՐԵՎԷ ԳՐԱԳԵՏ, ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ, ՈՐԸ ԿԱՆԳՆԱԾ Է ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿՈՂՔԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցը ռեժիսոր **Հովհաննես Գալստյանն** է:*

- Խորհրդարանական ընտրություններին հաշված օրեր են մնացել: Նախընտրական այս փուլում ՔՊ առաջնորդն իր նախընտրական քարոզարշավները վերածել է ատելության խոսք ու սպառնալիքներ տարածելու հարթակի: Վարչապետի պաշտոնին երրորդ անգամ հավակնող Փաշինյանն այս անգամ այնպիսի ջղաձգումների մեջ է հայտնվել, որ նույնիսկ նախորդ շաբաթ իր ձեռքերին ազատություն տվեց՝ քաշքշելով ընդդիմադիր հայացքներ կրող մի կնոջ: Նա սպառնում է սատկացնել, կզացնել, բոմժ դարձնել ընդդիմադիր գործիչներին, իսկ ժողովրդին սպառնում է, որ եթե ինքը չվերընտրվի, Հայաստանում խաղաղություն չի լինի:

- Սրանք պրիմիտիվ ջղաձգումներ են, որոնք նույնիսկ ծայրահեղ, արմատական ընդդիմադիր ուժերին վայել չեն: Այն լեքսիկոնը, որ կիրառում է երկրի վարչապետը, պարզապես մեծագույն խայտառակություն է: Քաղաքական պայքարի նշաձողն այս մարդը իջեցրել է անհավանական ցածր մակարդակի: Նման լեքսիկոնով երբ խոսի ընդդիմադիր ուժի ներկայացուցիչը, էլի մի տեղ գուցե կարողանաս հասկանալ, որ տվյալ գործիչն ունի PR-ի կարիք եւ էպատաժ է ստեղծում, որպեսզի ուշադրություն գրավի, բայց երբ նման բառապաշարով խոսում է իշխանության առաջին դեմքը, որն ութ տարի է՝ ունի բացարձակ իշխանություն, եւ դրա արդյունքում որեւէ դրական արդյունք չկա մեր երկրում, ապա հասկանալի չէ, թե ինչու է երկրի վարչապետը որոշել նման լեքսիկոնով խոսել: Աշխարհում նման բաներ անում են միայն ծայրահեղ լիբերալիստական ուժերը: Այս մարդն իր ողջ էությամբ պսեւդոհեղափոխական է եւ չի գիտակցում, որ արդեն ութ տարի է՝ վարչապետ է: Չեմ ուզում ավելի տգեղ բառեր օգտագործել, բայց սա արդեն զավեշտ էլ չէ, խայտառակություն է եւ մեծագույն ամոթ: Բայց այս ամենի մեջ ամենասարսափելին այն է, որ Նիկոլ Փաշինյանը, հավասարվելով հողին, իր հետեւից տանում է նաեւ նորմալ մարդկանց: Նա վիրավորում է ընդդիմադիր գործիչներին, եւ ընդդիմադիրները, ստիպված, ինչ-որ կերպ պատասխանում են նրան: Մենք՝ Կովկասում ապրող ժողովուրդներս, չենք սիրում վիրավորանքը թողել անպատասխան: Դրա համար շատերը ստիպված իջնում են այս մարդու մակարդակին եւ պատասխանում են նրան՝ իր լեզվով: Բայց այդ երեւույթը բնորոշ չէ գրագետ քաղաքական ուժերին, տվյալ պարագայում՝ Հայաստանի այսօրվա ընդդիմությանը: Ընդդիմադիր խոշոր երեք ուժերի ներկայացուցիչներն իրենց ապրած կյանքով, տարիքով եւ արձանագրած հաջողություններով այնպիսի անհատականություններ են, որ, հաստատապես, Նիկոլի բառապաշարով վերջին անգամ դպրոցական տարիներին են խոսել: Այսօր այս մարդիկ եւս ստիպված են Նիկոլի հետ իր լեզվով խոսել, ինչը նսեմացնում է ողջ ընտրարշավը:

- Նիկոլ Փաշինյանը ցանկացած ընդդիմադիր քաղաքացու ասոցացնում է նախկին իշխանությունների հետ: Օրինակ՝ հայտնի միջադեպի ժամանակ նա բժիշկ տիկնոջն ասաց. «Եթե դու Ռոբն ես, քեզ էլ ենք կզացնելու»: Այսինքն՝ այս մարդու կարծիքով, ցանկացած գիտակից քաղաքացի պաշտպանում է նախկին նախագահների շահերը: Արդյո՞ք դա այդպես է:

- Նա լավ կանի՝ այդ բառապաշարով խոսի միայն իրեն հպատակված ՔՊ-ականների հետ, բայց ոչ երբեք՝ քաղաքացիների: Չկա ավելի մեծ ողբերգություն, քան այն, որ հեղափոխականը հանկարծ հասնում է պետական կառավարման լծակներին: Դա ուղղակի ողբերգություն է տվյալ երկրի համար: Հեղափոխականները չեն հասկանում, որ իշխանության գալուց հետո պատասխանատու են նաեւ այն մարդկանց համար, ովքեր ձայն չեն տվել իրեն եւ չեն կիսում իր հայացքները: Փաշինյանն այս ութ տարվա մեջ այդպես էլ չհասկացավ, որ ինքը պետության ղեկավար է եւ պատասխանատու է անգամ այն քաղաքացիների համար, ովքեր իր գաղափարները չեն կիսում, ավելին՝ քննադատում են իրեն: Այս մարդն ուզում է հպատակեցնել բոլորին, ուզում է, որ բոլորն իրեն ասեն՝ աչքիդ վերեւում ունք չկա, դու միակն ու անկրկնելին ես, դու հրաշք ես.... բայց իրականությունն այն է, որ նա բոլորիս կյանքն ապականել է, մահեր ու դժբախտություններ, կորուստներ է բերել, Արցախն է հանձնել, իր կառավարման արդյունքում թշնամին ներխուժել է մեր սուվերեն տարածք, եւ այսպես շարունակ: Ես հույս չունեմ, որ այս ընտրապայքարը կարող է շտկել այս մարդուն: Հասարակության մեջ կա մի փոքր շերտ, որին այս խոսույթը դուր է գալիս, սակայն, ի ուրախություն մեզ, այն մեր հասարակության ամենալավ շերտը չէ: Հասարակության գրագետ, խելացի, հայրենասեր շերտերը վաղուց զզվել են այս ամենից եւ հույս ունեն, որ անպայման ազատվելու են այս խայտառակությունից: Մենք պետք է անպայման նոր իշխանություն ձեւավորենք, եւ ես վստահ եմ, որ Փաշինյանը չի ստանալու իր երազած մեծամասնությունը, դա կբերի անխուսափելի բախումների:

- Խոսեցիք հանրության գրագետ եւ ոչ այնքան գրագետ շերտերի մասին: Վերջին շրջանում Փաշինյանի կողքին տեսնում ենք որոշ դերասան-շոումենների, երգիչների, ովքեր առաջներում երբեք չեն աջակցել Փաշինյանին, սակայն այժմ որոշել են աջակցել նրան: Այս մարդիկ հասարակության ո՞ր շերտին են պատկանում եւ ի՞նչ խնդիր են լուծում, գուցե պարզապես գումա՞ր են աշխատում:

- Անկեղծ ասած, ես չգիտեմ որեւէ գրագետ, բարձրակարգ արվեստագետի, որ կանգնած է Փաշինյանի կողքին: Փաշինյանի կողքին կանգնած են նրանք, ովքեր տարիներ շարունակ ծանր հարվածներ են հասցրել մեր մշակույթին: Հենց այս մարդկանց գործունեության ցածր որակն է հանրության վրա մեծ ազդեցություն թողել՝ բացասական իմաստով: Որեւէ բարձրակարգ մտավորական, դերասան չի սատարում Փաշինյանին եւ, առհասարակ, իշխանությանը: Երբ արվեստագետը կանգնում է իշխանության կողքին, դրանով մեծ խաչ է քաշում իր կոչման վրա: Աղքատ երկրում անհնար է լավ իշխանություն ունենալ: Աղքատ երկրներում իշխանությունները պարտադիր վատն են, անարդար, կոռումպացված են ու կաշառակեր:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՀՈՒՅՍ ՈՒՆԵՄ, ՈՐ ԴԱ ԱՆՈՒՄ Է ՄԻ ՔԱՆԻ ՁԱՅՆ ԱՎԵԼ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզարշավը վերածել է սպառնալիքների «մաստեր կլասի»: Եվ չնայած ցայտնոտի մեջ է, իսկ հողը երերում է ոտքերի տակ, միեւնույն է՝ ՔՊ առաջնորդը վստահ է, որ վերընտրվելու է հունիսի 7-ին եւ մինչեւ 2031 թվականը Գագիկ Ծառուկյանի առանձնատունը ծերերի խնամքի կենտրոնի է վերածելու: «Մինչեւ 2031 թվականը Գագիկ Ծառուկյանի՝ սարի գլխի տունը պետք է ծերերի խնամքի կենտրոն դառնա այնպես, ինչպես փեսայի՝ Գուլոյանի տունն արդեն պետության սեփականությունն է՝ 2,5 մլն դոլար արժողությամբ»,- Շիրակի մարզում նախընտրական քարոզարշավի շրջանակում քաղաքացիների հետ հանդիպման ժամանակ ասել է Փաշինյանը: Նա շարունակ խոսում է մրցակիցներին՝ Ծառուկյանին, Սամվել Կարապետյանին ու Քոչարյանին ունեզրկելու մասին: «Ինչպես 2 բոթասից սկսել են, էնպես էլ ես իրենց հասցնելու եմ 2 բոթասի մակարդակի»,- ասել է Փաշինյանը եւ որպես օրինակ բերել Ծառուկյանի փեսային՝ Աբովյանի նախկին քաղաքապետ Կարապետ Գուլոյանին պատկանող առանձնատունը, որն արդեն իսկ խլել են: Իր իշխանավարման ութուկես տարիներին Փաշինյանը նման մի քանի փորձ ունեցել է, օրինակ՝ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի առանձնատունն է խլել, սակայն այն ոչ թե պետությանն է վերադարձրել, այլ նվիրել է իր աճեցրած օլիգարխ Նարեկ Նալբանդյանին: Նույնը կատարվել է մաքսայինի նախկին պետ Արմեն Ավետիսյանի՝ Ծաղկաձորի «Գոլդեն փելես» հյուրանոցի հետ. այն նվիրատվության ճանապարհով պետությունը վերցրել է 15 միլիարդ 800 միլիոն դրամով, բայց երկուսուկես տարի հետո 5 միլիարդ դրամով վաճառվել է նույն Նալբանդյանին: Ի՞նչ շահեցին այս ամենից պետությունն ու հայ ժողովուրդը՝ ոչինչ, ի՞նչ շահեց Նիկոլ Փաշինյանը՝ միլիարդներ:

Փաստաբան **Հայկ Ալումյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Փաշինյանի վերոնշյալ սպառնալիքների եւ դրա իրավական կողմի մասին, նկատեց. «Այն, ինչ հայտարարում է Փաշինյանը, կարելի է գնահատել որպես նախընտրական սրացում, ուրիշ ոչինչ: Ինչ վերաբերում է հարցի իրավական կողմերին, ապա ինչ-որ մեկից, այն էլ՝ այնպիսի մեկից, որը չի զբաղեցրել պետական պաշտոն, ինչ-որ բան վերցնելը եւ պետականացնելը պետք է արվի շատ լուրջ իրավական ընթացակարգերով: Վարչապետը փաստացի իրեն թույլ է տալիս միջամտել դատական ընթացակարգերին, ավելին՝ անգամ դրանցից առաջ ընկնել, կանխատեսել, թե դատարաններն ինչ պետք է որոշեն նման հարցերում: Դա սարսափելի ցուցիչ է: Ծառուկյանի տունն ի՞նչ հիմքով կարող են դարձնել ծերերի կենտրոն, ես կդժվարանամ մեկնաբանել այս հարցը՝ վարչապետի տեսանկյունից, սակայն անգամ իրավունքի տեսանկյունից այս հարցը մեկնաբանելը զավեշտալի է: Եթե մեր երկիրն իրապես լիներ իրավական պետություն, ապա գործադիր իշխանության ղեկավարը երբեք չէր կարող կանխատեսել, թե որ դատական գործընթացն ինչպիսի ավարտ կունենա, առավել եւս, որ դատական ընթացակարգն անգամ չի էլ սկսվել: Մենք գործ չունենք անձի հետ, որը պետական պաշտոն է զբաղեցրել, որպեսզի քննարկվի, թե որքանով են նրա եկամուտները եղել հիմնավորված, եւ որքանով են դրանք եղել օրինական: Գործ ունենք գործարարի հետ, որի պարագայում այլ օրենսդրություն պետք է կիրառվի, սակայն անգամ չեմ ուզում կանխատեսել այդ օրենսդրության մասին: Գործարարի եկամուտները բացառապես հարկային մարմինների իրավասության տակ են, իսկ ես լավ չեմ պատկերացնում՝ եթե չկա հարուցված գործ, ինչպե՞ս կարելի է պնդել, որ անձի եկամուտները պետությանը պետք է անցնեն եւ ծառայեցվեն ինչ-որ խմբերի: Զարմանում եմ, որ գործադիրի ղեկավարն ասում է մի բան, որի ոչ միայն իրավունքը չունի, այլեւ նման գործառույթ իրականացնելու նախադրյալներ չկան: Հույս ունեմ, որ սա նախընտրական շրջանի համար է արվում՝ լրացուցիչ մի քանի ձայն ավել ստանալու նպատակով»:

ՍՅՈՒ

ՉՃԱՆԱՉԵԼ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արեւմուտքը մեծացնում է ճնշումը հայ հասարակության վրա. ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն Հայաստան է գալիս, որպեսզի ցույց տա, որ Հայաստանում իշխանության հարցը որոշողը ոչ թե հայ ընտրողներն են, այլ՝ իշխանության արեւմտյան տերերը, եթե իրենք որոշեն, որ Փաշինյանը մնալու է, ուրեմն հենց այդպես էլ լինելու է: Բայց Մարկո Ռուբիոյի այցը ցույց է տալիս նաեւ, որ ԱՄՆ իշխանություններն այնքան էլ վստահ չեն իրենց դրածոյի հաղթանակի մեջ, եթե վստահ լինեին, այցի անհրաժեշտություն չէր լինի:

Ամերիկացիների եւ, ընդհանրապես, գերտերությունների համար արժեքներն ու սկզբունքները որեւէ նշանակություն չեն ունեցել: Հայտնի են ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի խոսքերը՝ ասված Նիկարագուայի բռնապետ Անաստասիո Սամոսայի մասին. երբ նրան հարցրել են, թե ինչպես է վերաբերվում նրա չարագործություններին, Ռուզվելտը պատասխանել է. «Գուցե նա իսկապես շանորդի է, բայց մեր շանորդին է»: Սրա միակ իմաստն այն է, որ մեզ ծառայող վարչախմբերի պարագլուխների գործած հանցագործությունների նկատմամբ մենք հանդուրժող ենք, պատրաստ ենք աչք փակել: Նույնը վերաբերում է նաեւ Հայաստանին. ԱՄՆ-ում եւ ԵՄ-ում շատ լավ գիտեն, թե ինչպիսի հակամարդկային բռնապետություն է կառուցում Փաշինյանը, բայց ոչ միայն աչք են փակում դրա առաջ, այլեւ սիրահոժար աջակցում են այդ ռեժիմի վերարտադրությանը: Ժողովրդավարությունը կամ մարդու իրավունքներն այն գործիքներն են, որոնք գործադրվում են որպես միայն անհնազանդ իշխանությունների դեմ պայքարում ճնշում գործադրելու միջոց, մյուս բոլոր դեպքերում դրանք անպետք են եւ մոռացված:

Ընդհանրապես, ցանկացած իշխանության հիմքը դրա լեգիտիմությունն է, օրինականությունը: Լեգիտիմության աղբյուրը սեփական հասարակությունն է, երբ հասարակությունն ընդունում է, որ ինքն է ձեւավորել այդ իշխանությունը եւ դրան տվել որոշակի ժամանակով իրեն կառավարելու լիազորություններ: Այդ լեգիտիմությունը խարսխված է հասարակության կողմից ընտրությունների՝ դրանց պաշտոնական արդյունքները ճանաչելու վրա: Երբ հանրային գիտակցությունն ընդունում եւ ճանաչում է, որ ընտրությունների հրապարակված արդյունքներն իրականում արտահայտում են իրենց ընդհանրական քվեարկությունը, դրանով ճանաչում է նաեւ իշխանության օրինականությունը: Եթե 2021 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո հասարակությանը կամ գոնե դրա մեծամասնությանը հնարավոր եղավ համոզել, որ ընտրությունների արդյունքներն օրինական են, որ իսկապես մեծամասնությունը քվեարկել է Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագրի» օգտին, հիմա դա այլեւս անհնար է անել:

Փաշինյանի քարոզարշավի ընթացքը, երբ մարդիկ իր ներկայությամբ արտահայտում են մերժողական վերաբերմունք, երբ այդ հավաքների մասնակիցների մեծ մասը պարտադրաբար եւ ճնշման միջոցով բերված պետական աշխատողներ են ու անչափահաս դպրոցականներ, հազարավոր շարքային մարդկանց հրապարակային արտահայտած բացասական դիրքորոշումը, ընդդիմադիր կուսակցությունների հանդիպումներին հավաքվող տասնյակ եւ հարյուր հազարավոր մարդկանց ներկայությունը ցույց են տալիս, որ ռեժիմը կորցրել է իր հանրային վստահությունը: Ինչ արդյունք էլ հրապարակի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, եթե դրանով հռչակվի Փաշինյանի եւ ՔՊ-ի հաղթանակը, միեւնույն է՝ մարդիկ, հասարակությունը համոզված են լինելու, որ ընտրությունների արդյունքը կեղծվել է, որ իրենք քվեարկել են այլ կուսակցությունների օգտին, իսկ պաշտոնական արդյունքով արձանագրվել է այլ բան: Ընտրություններով ռեժիմը զրկվելու է ներքին լեգիտիմությունից, քանի որ հասարակությունը մերժելու է՝ ճանաչել իշխանության օրինականությունը, հրաժարվելու է ճանաչել նրանց կառավարելու իրավունքը:

Ահա՝ այստեղ է, որ ի հայտ են գալիս տարբեր տեսակի մարկոռուբիոները, կայակալլասները եւ ուրսուլաֆոնդերլայենները: Ներքին լեգիտիմությունը կորցրած ռեժիմը փորձում է ստանալ արտաքին լեգիտիմություն: Եթե ներքին լեգիտիմության աղբյուրը հասարակությունն է, ապա արտաքին լեգիտիմության աղբյուրը տարբեր երկրներ ու դրանց ղեկավարներ են, որոնք հայտարարում են, որ ճանաչում են այս կամ այն ռեժիմի օրինականությունը, հենց այդ ռեժիմին են ճանաչում Հայաստանի օրինական ներկայացուցիչ՝ անկախ նրանից, թե սեփական հասարակությունն ինչպես է վերաբերվում այդ ռեժիմին: Փաշինյանի միակ հույսը մնացել է արտաքին աջակցությունը, որ իրեն կառավարելու լիազորություն տա, ոչ թե սեփական հասարակությունը, այլ ինքը նշանակվի դրսից, արտաքին ուժեր ճանաչեն իրեն Հայաստանի իշխանություն:

Արդյո՞ք արեւմտյան աջակցությունը բավարար է, որ Փաշինյանը կարողանա վերարտադրվել, կարողանա կեղծիքով եւ բռնությամբ պահել իշխանությունը: Ամեն ինչ կախված է հասարակությունից եւ հատկապես՝ ընդդիմադիր առաջնորդներից: Եթե նրանք միասնաբար չճանաչեն կեղծված ընտրությունների արդյունքները եւ հասարակությանն ըմբոստության ու դիմադրության կոչ անեն, ռեժիմը չի դիմանա, անկախ այն բանից, թե ինչ կասեն ամերիկացիները կամ եվրոպացիները: Խնդիրն այն է, որ իշխանության արեւմտյան տերերը փորձելու են ճնշում գործադրել նաեւ ընդդիմադիր առաջնորդների նկատմամբ, նրանց եւս համոզել՝ ճանաչել իրենց դրածոյին, ճանաչել իրենց նշանակման օրինականությունը: Հիմա արդեն պարզ է, որ Հայաստանի ընդդիմությունը պատրաստ է ընդդիմանալ արտաքին թելադրանքին եւ չճանաչել ամերիկացիների ու եվրոպացիների որոշման օրինականությունը: Գոնե ինձ այդպես է թվում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԳԻՇԵՐ. ՄԱՖԻԱՆ ԲԱՑԵԼ Է ԱՉՔԵՐԸ ԵՎ ՓՆՏՐՈՒՄ Է ՄԻԱՄԻՏ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ

Քարոզարշավի վերջին տասնօրյակում 3 խոշոր ընդդիմադիր ուժերը միասին արդեն լուրջ հակակշիռ են դառնում հեղափոխական իշխանությանը՝ դառնալով նրանց ելույթների միակ թեման եւ ատելության թիրախը: Մենք երբեք չենք տեսել այսպիսի քարոզարշավ, երբ թեկնածուները՝ ամբողջ թիմով, միաբերան խոսեն այլ թեկնածուների մասին: Ուժեղ մրցակիցներին հերթով սպառնում են, զրպարտում, տեղում հրապարակում դատավճիռներ եւ անգամ իրականացնում են երեւակայական մահապատիժներ՝ անմիջապես քարոզարշավային ելույթների մեջ: Ընդ որում, 18 մրցակիցներից միայն 3-ն են իշխանության թիրախը, մնացած 15-ն անուշադրության են մատնված, քանի որ նրանցից, փաստորեն, իշխանության համար վտանգ չկա, իսկ օգուտ, հավանաբար, կարող է լինել:

Նկատենք, որ սրա համար չէր մտածված այս մեկամսյա նախընտրական արշավը: Օրենսդիրը ժամանակին մտածել է, որ մեկ ամիսը լիովին բավարար է լինելու, որպեսզի յուրաքանչյուր թեկնածու կարողանա հանգամանորեն ներկայացնել իր անելիքներն առաջիկա տարիներին եւ հասցնել լինել այնքան համոզիչ, որ հանրությունը որոշի վստահել երկրի ղեկը՝ այս կամ այն հարցը լուծելու, ավելի որակյալ կյանք ու ավելի ապահով հայրենիք կառուցելու պատվիրակմամբ: Ի՞նչ ենք այսօր տեսնում: Իշխանությունն իր հիմնական մրցակիցներին ներկայացնում է որպես հանցագործներ, որոնց արածները, թալանածն ու հնարավոր վտանգները թվարկելու համար լավ է, որ ունենք 30 օր, այլապես դեռ ինչ-ինչեր էինք լսելու:

Հիմա, երբ բոլոր պատմությունները պատմել են ու կրկնել, անցել են քարոզարշավի կեսից ավելին, արդեն ապահովության համար կոնկրետ ուղղորդում են ընտրողին ոչ թե դեպի իրենց, ինչը կլիներ տրամաբանական, այլ դեպի մնացած 15 թեկնածուները՝ բացառությամբ հիմնական ընդդիմադիր 3-ի:

Հնարամիտն ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն է, որը շատ հաճախ պետության ղեկավարումը շփոթում է հանրահայտ «Մաֆիա» խաղի հետ ու գործադրում է հետաքրքիր բլեֆը՝ սեւ խաղացող չերեւալու համար: Ասում է՝ լավ, եթե չեք ուզում ընտրել մեզ՝ թիվ 16-ին, ապա գնացեք եւ ընտրեք մեկ ուրիշին, բայց ոչ հիմնական ընդդիմադիրներին, այլ նրանցից բացի՝ որեւէ այլ թեկնածուի: Նա, այսպիսով, ուղղակիորեն ուղղորդում է իրեն չսիրող ու չսատարող ընտրողին, ասում է. գնա ընտրիր՝ ում ուզում ես, բացի այդ երեքից, որոնք ի վիճակի են ինձ հաղթել: Պետք է լինել արթուն եւ զգոն, հատկապես որ մաֆիան աչքերը բացել է եւ փնտրում է միամիտ ընտրողների:

Սա իրոք քաղաքագիտական նոնսենս է, որը կարող էր ծագել միայն կյանքի ու մահի այս ամեհի աղջամուղջում հայտնված խելագարների գլուխներում: Դիմել իրենց չընտրողներին, չսիրողներին ու չվստահողներին եւ խնդրել՝ ձեր ձայնը տվեք այս 15-ին ու մի տվեք այն երեքին, որպեսզի մենք հաղթենք:

Այս կոչից ի՞նչ հետեւություններ պետք է անեն ընտրողները.

ա) եթե ես ՔՊ-ի ընտրողը չեմ, հետեւաբար, ես ՔՊ-ի խորհուրդները կատարողը չեմ

բ) եթե ես չեմ ընտրելու ՔՊ-ին, ուրեմն չեմ հավատում եւ վստահում նրա խոսքին, հետեւաբար, պիտի անեմ ճիշտ հակառակը, ինչ ասում է Ալեն Սիմոնյանը

գ) տրամաբանորեն՝ ՔՊ-ն պետք է քարոզի ընտրել իրեն, բայց եթե առաջարկում է ընտրել այն 15-ին, ուրեմն դրանք եւս իրեն են ձեռնտու, եւ նույնն է, թե ընտրել հենց իրեն,

դ) իշխանությունն առաջարկում եւ խնդրում է փոշիանալ, անէանալ, կորցնել անվստահելի իշխանությունը փոխելու բացառիկ շանսը:

Եվ, ուրեմն, ՔՊ-ին չվստահող մարդը ոչ մի կերպ չպետք է վստահի կարկառուն քպականների խոսքին ու, կատարելով ճիշտ հակառակը, պետք է գնա ու իր ձայնը հանգիստ խղճով տա մեկին հենց այն երեքից, որոնց բացառում է ԱԺ նախագահը:

Ի՞նչ պետք է մտածեն այն 15-ը, որոնց համար սիրահոժար քարոզում է գործող իշխանավորը. յուրաքանչյուրը նրանցից պետք է հասկանա.

ա) վիրավորական է եւ ամոթալի, որ իրենք ոչ մի կերպ մրցակից չեն դիտարկվում գործող ուժի կողմից, եւ վերջինս իրեն չսիրողներին ուղղորդում է այդ ձայների փոսը՝ փոշիանալու

բ) իրենք դատարկ վագոններով անցնելու են այս ընտրապայքարը ու իրենց գնացքում միամտաբար հայտնված մի քանի քվեները տեղափոխելու են ՔՊ: Իրենք միայն կարող են հանդիսանալ քվեներ տեղափոխողներ, ընդ որում՝ դա լավ ծառայություն չէ, քանի որ այդ ուղեւորները տոմս չեն գնել՝ այդ ուղղությամբ սլանալու համար:

Եվ, ուրեմն, հարգելի 15 առանձին ուժեր, ընտրել ձեզ՝ նույնն է, թե փոշիացնել ընդդիմադիր մի քվե եւ ավելին՝ դրանով իսկ օգուտ տալ ու հաճույք պատճառել իշխանությանը: Սա է ամբողջ պատկերը, որը լույսի պես պարզ է: Այս գիտակցությունը կօգնի, որպեսզի մինչեւ մայիսի 28-ը այդ 15-ից առավել պատվախնդիրները, որոնք ունեն արժանապատվություն եւ ցանկություն չունեն լինել ընդդիմության ձայները ՔՊ տեղափոխող դատարկ վագոն, դուրս գան ընտրապայքարից, քանի դեռ դրա հնարավորությունը կա՝ իրենց սուրը հարաբերականորեն պատվով դնելով պատյան, քանի որ պատյանից հանել էին, փաստորեն, անօգուտ:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՍԱՆԿՑԻԿ

Հայաստանի կարգավիճակի հարցը ԵԱՏՄ երկրների ղեկավարներն Աստանայի նիստում քննարկելու են մայիսի 29-ին, իսկ մինչ այդ Ռուսաստանից ամենօրյա ռեժիմով նախազգուշացնող հայտարարություններ են հնչում: Վերջինը ՌԴ նախագահի խոսնակ

ԵԹԵ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱԶԻ ԳԻՆԸ ԲԱՐՁՐԱՆԱ, ՀՀ-ՈՒՄ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԿԱՎԵԼԱՆԱ 2-3 ԱՆԳԱՄ

Դմիտրի Պեսկովինն էր, որը մայիսի 25-ի ճեպազրույցի ժամանակ ասել է, որ Երեւանի համար գրավիչ արտոնյալ գազի գինը կարող է սկսել ձեւավորվել շուկայական հիմունքներով, այսինքն՝ Եվրամիության գներով: «Այստեղ գների կատեգորիան արդեն լրիվ այլ է՝ շուկայական: Սա շատ լավ հայտնի է մեր երեւանյան բարեկամներին»,- ասել է Պեսկովը՝ հիշեցնելով Փաշինյանի «պարզաբանումը»՝ ինչ-որ պահի պետք կլինի վերջնական որոշում կայացնել:

Ինչ ասել է՝ եվրոպական գներ, եւ ինչպե՞ս կփոխվի Հայաստանում կյանքի մակարդակը, քանի՞ անգամ կաճի աղքատությունը: Մեր հարցերին պատասխանելով՝ էներգետիկ հարցերի փորձագետ **Արմեն Մանվելյանը** նկատեց, որ «եվրոպական գներ» ասվածը ձեւավորվում է հոլանդական բիրժայում, որը որոշում է գազի գինը՝ պայմանավորված առաջարկով եւ պահանջարկով: «Հիմա գազի գինը բավականին բարձր է: Եվրոպացիները գազը ստանում էին Կատարից, բայց հիմա, քանի որ Հորմուզի նեղուցը փակ է, իրենք այլեւս չեն վաճառում: Ժամանակին Եվրոպան Ռուսաստանից ստանում էր խողովակային գազ, որն ամենաէժանն էր, ու որը հիմա չեն ստանում, քանի որ «Հյուսիսային հոսք» գազատարները պայթեցվել են, եւ այնտեղ գազի գինը տատանվում է, ըստ սեզոնի, 400-600 դոլար»: Տեղեկացանք, որ այս պահի գնով 1000 խմ բնական գազի արժեքը հոլանդական բիրժայում կազմում է մոտ 485-490 եվրո: Սրանք գազի մեծածախ գներն են՝ շեշտում է փորձագետը, եւ բնակչության համար գները շատ ավելի բարձր են: Թե ռուսներն ինչքանով կբարձրացնեն գազի գինը Հայաստանի համար, այս պահին դժվար է ասել: «Օրինակ, երբ Վրաստանի հետ հարաբերությունները վատացան, նրանք գազի գինը Վրաստանի համար դարձրին 250 դոլար, որը Վրաստանի համար շատ թանկ էր: Վրաստանը դրա դիմաց գազ էր վերցնում Ադրբեջանից, որը 240 դոլար էր: Բայց էն ժամանակ Ադրբեջանն ազատ գազ ուներ, հիմա չունի: Եվ վրացիները կամաց-կամաց նորից սկսեցին ռուսներից գազ վերցնել: Այս պահի դրությամբ ռուսական գազը վրացական շուկայում դոմինանտ է, թեեւ դրա շուրջ աղմուկ չեն բարձրացնում: Նրանք շատ գազ են վերցնում ռուսներից՝ հույսով, որ ռուսները կիջեցնեն գինը: Եթե մեզ մոտ գազի գինը նույն՝ 250-ը դառնա, ապա բնակիչների համար կդառնա մոտ 500 դոլար, հիմա մանրածախը 300-400 դոլար է: Սա կազդի ամեն ինչի գների վրա՝ եւ էլեկտրաէներգիայի գների վրա, եւ մեքենաների շարժի, եւ խոշոր ջերմոցների գների վրա, որոնք էլի գազով են աշխատում, ամեն ինչի վրա: Իսկ այլընտրանքային գազ ցածր գնով՝ 250 դոլարով, տարածաշրջանում չկա: Ադրբեջանը, օրինակ, Թուրքիային գազ է վաճառում 290-300 դոլարով»,- նշեց Արմեն Մանվելյանը:

Հիշեցնենք. այս պահին Հայաստանը՝ որպես ԵԱՏՄ երկիր, ռուսական գազը շարունակում է ստանալ արտոնյալ՝ 1000 խմ-ի դիմաց 165 ԱՄՆ դոլարով:

Քանի՞ անգամ կավելանա աղքատությունը Հայաստանում՝ մեր հարցին Արմեն Մանվելյանը պատասխանում է. «Աղքատությունը Հայաստանում կավելանա 2-3 անգամ, որովհետեւ, նորից եմ ասում՝ երբ որ խոսում ենք էներգետիկայի մասին, պետք է նայենք ամեն ինչ: Օրինակ, հարստացված ուրանը ռուսները մեզ միջազգային գներից էժան գներով են տալիս, եւ, բացի դա, քանի որ Հայաստանը ԵԱՏՄ անդամ է, մենք բենզինի որոշակի քվոտաներ ունենք, որոնք մեր դեպքում պահպանվում են: Եթե դուրս ենք գալիս, այդ բենզինի քվոտաներից էլ ենք զրկվում, եւ ցանկացած պահի նա կարող է ասել՝ քեզ բենզին չեմ ծախում, գնա, ումից ուզում ես, բեր: Նշանակում է, բենզինի գները կթանկանան, միջուկային վառելիքի գինը կթանկանա, շղթայական ռեակցիայի է բերելու»: Ինչ կարող է անել Հայաստանն այս վատթարագույն իրավիճակում: «Ոչինչ,- պատասխանում է Արմեն Մանվելյանը,- նույնը, ինչ Վրաստանը: Ամերիկացիները նրանց գումար էին տալիս դրա դիմաց, ասում էին՝ ոչինչ, դիմացեք, մենք ձեզ փող կտանք, նախարարներին աշխատավարձ էին տալիս, բայց նույնը Հայաստանի համար չեն անելու: Վրաստանն էլի կամաց մտավ ռուսական շուկա, եւ նույնը Հայաստանին է սպասվում: Այլընտրանք չկա: Իրանն ինքը գազի կարիք ունի այս պատերազմի արդյունքում, եւ կարող է նա՝ ինքը դադարեցնել գազի արտահանումը Հայաստան, եւ հետո՝ Իրանի շուկան արագ աճում է: Իսկ Ադրբեջանը, հիշում եք, որ Երեւան էին եկել ԵՄ անդամները, հետո թռան Բաքու, մասնավորապես՝ Իտալիայի վարչապետը: Ադրբեջանի հետ նրանք գազի պայմանագրեր են կնքում: Հասկանալի է, որ Ադրբեջանին ավելի ձեռնտու է գազ վաճառել իտալացիներին, քան էժանով վաճառել Հայաստանին»,- նշեց փորձագետը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԵԹԵ ՀՆԴԿԱԿԱՆ ՀՕՊ-Ը ՀՈՒՍԱԼԻ Է, ԻՆՉՈ՞Ւ Է ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՌԴ-ԻՑ ԳՆՈՒՄ

Մայիսի 28-ին ընդառաջ Երեւանում ռազմական շքերթ է կազմակերպվում: Մեծ քանակությամբ զենք, զինտեխնիկա են հանվել փողոցներ: Արդեն քանի օր է՝ ՊՆ-ն շքերթի փորձերն է անում, եւ նպատակն ակնհայտորեն մեկն է՝ տպավորություն թողնել մարդկանց վրա, թե այս տարիներին զենք-զինամթերք է գնվել, եւ անհիմն են բանակը կազմալուծելու, չզինվելու մասին իշխանություններին ուղղված մեղադրանքները:

Բայց մասնագետներն ասում են, որ հիմնականում ցուցադրվում է Հնդկաստանից գնված զենք-զինտեխնիկան, որը լավագույններից չէ, եւ մարտի դաշտում չի ստուգվել դրա կենսունակությունը: Հնդկաստանից զենք եւ զինտեխնիկա գնելու մասին իշխանությունները տեւական ժամանակ է՝ խոսում են, հպարտանում են, սակայն թե խոսքն ինչ զենքի մասին է, որակյա՞լ է արդյոք այն, թե՝ ոչ, ո՞ր երկրներում են պատերազմական իրավիճակներում հնդկական զենք ու զինտեխնիկա կիրառում, հայտնի չէ:

Ռազմական փորձագետ **Դավիթ Զամալյանը**, մեզ հետ զրույցում խոսելով Հնդկաստանից բերված զենքի եւ դրա արդյունավետության մասին, ասում է. «Սպառազինությունների ձեռքբերման գործընթացը երբեք ու երբեք չի կարելի կազմակերպել հակադրության տրամաբանության մեջ: Հակառակը՝ այն պետք է կազմակերպվի փոխլրացման, լրացման տրամաբանությամբ: Եթե այն կազմակերպում ես լրացնելու տրամաբանությամբ, ապա նորմալ է, որ, հիմնական մատակարարումներին զուգահեռ, ըստ անհրաժեշտության, տարբեր երկրներից էլ զենք ձեռք բերես այն սեգմենտում, եթե այդ պահին հիմնական կողմից հնարավոր չի եղել ձեռք բերել: Ամբողջ ողբերգությունն այն է, որ Հայաստանի իշխանությունները Ռուսաստանի հետ ռազմատեխնիկական կապերի խզումը եւս ներկայացնում են իբրեւ ձեռքբերում, այն է՝ ռազմատեխնիկական ասպարեզում դիվերսիֆիկացիա, իսկ իրականում՝ այս ասպեկտում նույնպես կապերը խզում են ՌԴ-ի հետ: Իբրեւ թեւ ՌԴ-ին փոխարինող երկու երկիր են գտել՝ Հնդկաստան եւ Ֆրանսիա:

Հնդկական սպառազինությունը, ըստ որոշ մասնագիտական աղբյուրների, նույնիսկ Հնդկաստանի զինված ուժերի համար դեռեւս անծանոթ է: Անգամ հնդկական բանակը Հայաստանին վաճառած որոշ զինատեսակներ չի փորձարկել իր բանակում: Հնդկաստանը երբեք չի եղել նման մասշտաբների զենք գնող, ինչպիսին որ Հայաստանն է: Մենք առաջինն ենք, բայց տեսեք, թե որտեղ է զավեշտը: Իրան-ԱՄՆ լարվածության ֆոնին Հնդկաստանը հայտարարեց, որ ՌԴ-ից գնում է ՀՕՊ-եր, երբ նույն Հնդկաստանն արտադրում է հակաօդային պաշտպանության համալիրներ: Եթե Հնդկաստանի ստեղծած սպառազինությունը լիարժեք հուսալի է, եթե որակապես ռուսականին հավասար է, ապա Հնդկաստանի բանակն ինչո՞ւ պետք է ՌԴ-ից գներ ՀՕՊ-եր, իրենց արտադրածը թողած: Դա նշանակում է, որ իրենք իրենց ստեղծածի վերաբերյալ ունեն վերապահումներ: Մենք կարող էինք հակաօդային պաշտպանիչներ ձեռք բերել Ռուսաստանից շատ ավելի մատչելի, անգամ՝ անվճար, եթե հայկական կողմից վարվեր ճիշտ քաղաքականություն: Հնդկաստանից զենք գնելը բերում է մեծ ռիսկեր մեզ համար: Այո, մենք ոչինչ չգիտենք դրանց հուսալիության հետ կապված: Ռեալ մարտական իրավիճակում Հնդկաստանն ունեցավ խնդիրներ Պակիստանի հետ, սակայն Պակիստանը շահեց: Սա եւս շատ կարեւոր հանգամանք է: Ամեն դեպքում, ես չեմ պնդում, որ հնդկական զենքն անորակ է, ոչ, պարզապես այն ռուսականի նման հուսալի չէ: Այն, ինչ Հնդկաստանից Հայաստանը գնել է, գնել է շատ թանկ, կարելի էր գնել նույն բանն ավելի մատչելի եւ, որ ամենակարեւորն է՝ որակապես ավելի բարձր: Բայց այս ամենը խնդրի մի կողմն է: Հայաստանի համար խնդիրը ոչ այնքան զենք գնելն է, որքան՝ գնված զենքը տեղ հասցնելը: Եթե մենք հայ-ռուսական համագործակցության շրջանակներում ստանում ենք սպառազինություն, գիտենք, որ այն մեզ է հասնելու Իրանի տարածքով եւ հասցվելու է գուցե մի փոքր ուշ, բայց դրանք անպայման հասել են մեզ: Իրան-Ռուսաստան հարաբերությունները ռազմավարական մակարդակի են, այլ տարբերակ չի կարող լինել: Հնդկաստանից եկող զենքը խափանումներ է առաջացնելու: Հնդկական զենք մատակարարողները կախվածության մեջ են Իրանից: Իսկ ո՞վ է երեկ Հայաստան ժամանել ԱՄՆ-ից...»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Ուժեղ Հայաստանը» 2-ական վստահված անձ կունենա

«Ուժեղ Հայաստան» դաշինքը ընտրության օրը բոլոր ընտրատեղամասերում ունենալու է վստահված անձինք: Դաշինքի ընտրական ցուցակի 3-րդ համար **Գոհար Մելոյանը** հայտնեց, որ մարդկային ռեսուրսի խնդիր չունեն. «Մենք ունենք բավականաչափ ռեսուրս, որ յուրաքանչյուր ընտրատեղամասում ունենանք անգամ 2 վստահված անձ»:

Անդրադառնալով հարցին՝ իշխանության կողմից իրականացվող ընտրախախտումներն արդյոք արձանագրվո՞ւմ են, Մելոյանը նշեց. «Ունենք փաստահավաք խումբ, ամեն ինչ արձանագրում ենք ու մոտ օրերս հայտարարությամբ կամ ասուլիսով հանդես կգանք»:

Նա նաեւ տեղեկացրեց, որ մի շարք դիմումներ են ներկայացրել ԿԸՀ եւ սպասում են առաջիկա օրերին ընթանալիք ԿԸՀ նիստին, որի ժամանակ անդրադարձ կկատարվի այդ դիմումներին:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՀԱՄ

ՆԻԿՈԼԸ, ՄԻԱՍԻՆ ՎԵՐՑՐԱԾ, ՔՈՂԱՐԿՎԱԾ ԷՐԴՈՂԱՆ ԵՎ ԱԼԻԵՎ Է

ԱՄՆ-ում ժամանակավորապես ապրող գրող, հրապարակախոս **Պատրիկ Արտեմիի** հետ զրույցը մենախոսության նմանվեց եւ, կարծում եմ՝ կհետաքրքրի ընթերցողին:

«Անհուն տիեզերքում հայրենիքից թանկ ոչինչ չկա: Բայց ահա գտնվել է մի մարդ, որը սառնասրտորեն «բազար» է արել հայրենիքի վրա: Նիկոլը հետեւողականորեն սրում է հայ-ռուսական հարաբերությունները՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի պահանջով: Նիկոլը պատանդ է նրանց ձեռքին, նրանց կամակատարը: Պուտինը թուրք-ադրբեջանական տանդեմի միակ զսպիչ ուժն էր, նա պարբերաբար ասում էր՝ հայ-ադրբեջանական կոնֆլիկտը պիտի լուծել բանակցությունների միջոցով: Անհրաժեշտ էր Պուտինին գժտեցնել մեզ հետ: Ո՞վ պիտի աներ դա, պարզ է՝ Նիկոլը: 2020-ին Պուտինը ժամանեց Երեւան: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ երկրների ղեկավարներին դիմավորում են ինքնաթիռի շարժասանդուղքի մոտ: Պուտինին ոչ ոք չդիմավորեց: Նա իր մեքենայով միայնակ եկել, կանգնել էր նախագահական նստավայրի առաջ եւ հավաքվածներին «հարցնում» էր, թե ինչպես բարձրանա վարչապետի մոտ: Ես էն ժամանակ գրեցի, որ խեղկատակ Նիկոլի ֆարսը շատ թանկ է նստելու հայ ժողովրդի վրա: Այդպես էլ եղավ. Նիկոլի դավաճանության շնորհիվ Էրդողանն ու Ալիեւը մտել էին Պուտինի ականջը եւ հաղթահարել նրա վետոն: Շատ չանցած՝ սկսվեց հայակործան կառավարելի պատերազմը՝ կանխորոշված պարտությամբ:

Ո՞վ կհավատար դրան, եթե հենց ինքն անձամբ չխոստովաներ: Արցախն առանց պատերազմի հանձնել հնարավոր չէր: Այն ժամանակ, երբ ժողովուրդը զբաղված էր Նիկոլ մեծարելով, վերջինս, Ալիեւի հետ քիթ-քթի՝ պլանավորում էր կառավարելի պատերազմ՝ Հայաստանի պարտությամբ: Դժբախտ երկիր Հայաստան, զավակներիդ ուղարկել էիր ռազմի դաշտ, իսկ քո դավաճան գերագույն գլխավոր հրամանատարը, առոք-փառոք նստած կառավարական ամառանոցում, ուղղորդում էր թշնամուն՝ ինչպես ոչնչացնի քո բանակները եւ զավթի քո հինավուրց Հայրենիքը: Դուք այս պատմության սահմռկեցուցիչ շարունակությունը լսեք. Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբը նրան հայտնում է, որ թշնամին մեզնից ուժեղ է, եւ պետք է հասնել զինադադարի: Այդ նեղ պահին Աստված օգնության է ուղարկում միջնորդին՝ Պուտինին, որն առաջարկում է իր հովանու ներքո կնքել զինադադար: Դա այն էր, ինչ մենք երազում էինք: Արցախը, ներառյալ՝ Շուշին, Լաչինը, Քարվաճառը, մնում էին մեզ: Նիկոլը մերժում է եւ շարունակում է պատերազմը, քանի որ, մեր թշնամու հետ ունեցած պայմանավորվածության համաձայն, պետք է ապահովեր Հայաստանի կապիտուլյացիան, քանի որ «կասեին՝ դավաճան է»: Եվ սառնասրտորեն զոհաբերելով հազարավոր հայ երիտասարդների՝ բարձր մակարդակով կատարեց մեր թշնամիների առաջադրանքը: Հաղթանակած դավաճանը մասնատել է երկիրը, պառակտել ժողովրդին, արդարներին դատում է, հանցագործներին՝ նշանակում պաշտոնների: Խեղճ հայ ժողովուրդ, ութ տարի մղձավանջի մեջ է, եւ վերջը չի երեւում: Հիմա մեր ժողովուրդն անուժ է՝ որեւէ բան ձեռնարկելու դավաճանի դեմ, ուղղակի խնդրում-պաղատում է, որ խնայի, չոչնչացնի մեր պետականությունը: Դե, Նիկոլն էդքան էլ չար չէ, մեծահոգաբար կարող էր տալ համաձայնություն, բայց վախենում է, որ Էրդողանն ու Ալիեւը ականջները կկտրեն:

Հոգեվարքային այս ծանր իրադրության մեջ ուզում եմ որդիաբար կիսվել իմ ժողովրդի հետ եւ ասել ճշմարտությունը:

1. Հայաստանն ունի սահմանափակ հողային տարածքներ: Դեռեւս անցյալ դարի 50-ականներին, Ստալինի կարգադրությամբ, հայաստանաբնակ ադրբեջանցիները գնացին Ադրբեջան: Բայց քիրվա-միրվա խաղալով՝ նրանց մի մասը նորից վերադարձավ: Մեծ քանակությամբ ադրբեջանցիներ կուտակվել էին Մասիսի շրջանում: Նույնիսկ Մոսկվայի կենտրոնացված ղեկավարության պայմաններում հայերը խուսափում էին այնտեղ ոտք դնել. վտանգավոր էր: Ադրբեջանցիների վերաբնակեցումը, որն Ալիեւի անձնական նախագիծն է, նպատակ ունի Հայաստանը դատարկել հայերից: Քանի որ Նիկոլը վերաբնակեցման մոլի կողմնակից է, ընտրություններին ոչ մի ձայն չպետք է տալ նրան, երկիրը պետք է մաքրել նիկոլախտից եւ խուսափել վերաբնակեցման աղետից:

2. Արդար, ազնիվ ընտրություն անցկացնելու համար միացյալ ընդդիմությունը պետք է պաշտոնապես դիմի Եվրամիությանը եւ պահանջի հրաժարվել Հայաստան պատվիրակություն ուղարկելու գաղափարից: Հակառակ պարագայում՝ որպես հակակշիռ, պատվիրակություն հրավիրել Ռուսաստանից:

3. Ամենայն հայոց կաթողիկոսը չպետք է սպասի, որ Նիկոլը հաղթի ընտրություններում եւ «գլխատի» իրեն: Եկեղեցին պետք է բացահայտի, որ Նիկոլը հեռացել է քրիստոնեական հավատից, որ կապի մեջ է մութ ուժերի հետ, եւ մեր ժողովուրդը պիտի մերժի նրան իր քվեն:

Մեր ժողովրդին եմ տրամադրում «բարեկամ» երկրի նախագահ, Նիկոլ ազգակործանի մտերիմ եղբայր Ալիեւի «փայլատակումները»՝ ուղղված մեզ. «Մենք ոչ մի վատ բան չենք արել հայ ժողովրդին: Նրանց ատելության, թշնամության պատճառը պետք է ուսումնասիրեն հոգեբանները, հոգեբույժները, բժիշկները»»:

Սիրելի բարեկամներ, Նիկոլը քողարկված Էրդողան եւ Ալիեւ է՝ միասին վերցրած:

Մեր ժողովրդին, մեր ընդդիմությանը հազար անգամ կոչ արեցի, որ կանգ չառնելով ոչ մի զոհողության առաջ, իջնեն հրապարակ եւ այդ զարհուրելի դավաճանից վերցնեն իշխանությունը: Բայց անկար հնազանդությամբ մեր ժողովուրդը կրում է այդ անարգանքը եւ մահու չափ ծանր ստորացումը: Հիմա էլ նույնն եմ պահանջում: Թեեւ տարիքս առած մարդ եմ, ես էլ պատրաստ եմ գալու եւ միանալու ձեզ: Երջանիկ կլինեմ, եթե Հայրենիքի փրկության առաջին զոհը ես լինեմ: Հույսս էլ է անհույս նայում Հայոց աշխարհին, որի ծաղկման համար քիչ բան չի արել նաեւ իմ սերունդը: Բայց այսօր հայ տղամարդիկ՝ անատամ, մեղկ ու ողորմելի, դաունի պես նայում են, թե նիկոլաոհմակն ինչպես է լլկում հայի եւ աշխարհասփյուռ հայության Հայրենիքը:

Հույսս փնտրում է հայոց Ժաննա Դ' Արկին, որ ցասումով զինված վրիժառու կանանց ջոկատով ջնջի նիկոլիզմը Հայաստանում»:



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

53 ՏԱՐՎԱ ԴԱՍԱԽՈՍԸ ԴԱՏԻ Է ՏՎԵԼ ՔՈԼԵՋԻ ՏՆՕՐԵՆԻ ԺՊ-ԻՆ

Իջեւան քաղաքի բնակիչ Զավեն Ալավերդյանը Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան քաղաքացիական հայց է ներկայացրել՝ ընդդեմ Տավուշի մարզի Իջեւան քաղաքի Նալբանդյան 5 հասցեում գործող Տավուշի Պատրիկ Տեվեճեան տարածաշրջանային քոլեջ-հիմնադրամի: Հայցադիմումի պահանջն է՝ կարգապահական տույժն անվավեր ճանաչել: Քաղաքացիական հայցն ընդունվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթ եւ մակագրվել է դատավոր Նարինե Անանյանին: «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից տեղեկանում եմ, որ այդ գործով դեռեւս դատական նիստ նշանակված չէ: Իջեւանի պետական քոլեջի երկարամյա դասախոս, գրող, լրագրող Զավեն Ալավերդյանը Ֆեյսբուքում բաց նամակ է հղել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի պետ Գարեգին Խաչատրյանին, այն մասին, որ Տավուշի Պ. Տեվեճեան տարածաշրջանային քոլեջ-հիմնադրամի տնօրինությունը դասերի ընթացքում փակում է քոլեջի բոլոր ելքերը՝ շուրջ 350 ուսանողներին եւ 80 աշխատակիցներին թողնելով արտակարգ իրավիճակների վտանգի տակ՝ հրդեհ, երկրաշարժ եւ այլն: Նա խնդրել է ձեռք առնել համապատասխան միջոցառումներ՝ այս վտանգավոր իրավիճակն ի չիք դարձնելու համար: Զ. Ալավերդյանի բաց նամակից եւ դրա վերաբերյալ «Հրապարակում» հոդվածի հրապարակումից հետո քոլեջի տնօրենի պաշտոնակատար Մարգարիտ Պողոսյանը Զ. Ալավերդյանին պաշտոնական գրություն է ուղարկել, որում հանդիմանել է նրան այն բանի համար, որ նա Ֆեյսբուքում գրառում է արել՝ դրանով «խաղալով քոլեջի հեղինակության հետ»: Զ. Ալավերդյանը պատասխան գրությամբ հերքել է, հայտնել, որ նման նպատակ, մտադրություն չի ունեցել, նշել, որ իր նպատակը եղել է խնդրի լուծումը:

Զ. Ալավերդյանը մեզ հայտնեց, որ մայիսի 7-ին ստացել է քոլեջի տնօրենի պաշտոնակատար Մարգարիտ Պողոսյանի գրությունը, որով նա հայտնել է, որ քոլեջի դռները դասերի ժամանակ փակում են կարգապահության նպատակով: Այդ գրության մեջ Զ. Ալավերդյանին ուղղված մեղադրանք կա, որ նա մի անգամ քոլեջի ուսանողներին դասաժամի ավարտից 10-15 րոպե շուտ է դուրս թողել: Տնօրենի պաշտոնակատարը, հղում անելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասին եւ քոլեջի ներքին կարգապահական կանոններին, Զ. Ալավերդյանի նկատմամբ կիրառել է կարգապահական տույժ՝ նկատողություն: 53 տարվա դասախոս Զ. Ալավերդյանն ինձ հայտնել էր, որ վիճարկելու է իրեն նկատողություն հայտարարելու տնօրենի պաշտոնակատարի որոշումը: Զ. Ալավերդյանը դասերի ժամանակ քոլեջի դռները բանալիով փակելու, ուսանողների եւ քոլեջի աշխատակազմի կյանքը վտանգելու խնդրի վերաբերյալ համացանցում բաց նամակով դիմել էր վարչապետ Նիկոլ Փաշինյանին, սակայն արձագանք չի եղել: Ալավերդյանը հայտնեց նաեւ, որ դասերի ժամանակ կրթօջախի դռները փակելու խնդիրը գոյություն ունի նաեւ Իջեւան քաղաքի հանրակրթական այլ դպրոցներում: Տավուշի մարզի դպրոցները, բացառությամբ ավագ դպրոցների եւ վարժարանների, գտնվում են Տավուշի մարզպետի աշխատակազմի անմիջական ենթակայության տակ:

Ապրիլի 17-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական շատ դպրոցներում դասերի ժամանակ դպրոցի դռները բանալիով փակում են, ինչն արտակարգ իրավիճակների (երկրաշարժ, հրդեհ եւ այլն) դեպքում աշակերտների էվակուացիայի համար դժվարություններ կհարուցի: Դուք, մարզպետի աշխատակազմն ի՞նչ միջոցներ եք ձեռնարկել այդ դպրոցների տնօրենների նկատմամբ»:

Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արմեն Գեւորգյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Հայտնում եմ, որ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը նման տեղեկատվություն չի ստացել»: Տավուշի մարզպետարանն էլ, այդ դպրոցներն էլ գործում են Իջեւան քաղաքում, սակայն մարզպետի աշխատակազմն անտեղյակ է կամ այդպիսին է ձեւանում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՉԻ ԿԱՐԵԼԻ ԲԱՔՎԻՆ ՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԻՐՏԸ, ԼՅԱՐԴԸ, ԹՈՔԸ, ՓՈԽԱՐԵՆԸ ՍՏԱՆԱԼ ԿՈՒՅՐ ԱՂԻՔԸ

Գրիգոր ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

Ի՞նչ եք կարծում՝ աշխարհում շատ այնպիսի անգրագետ ու խելապակաս մարդ կգտնվի, որն իր արդեն իսկ հեռացված կույրաղիքը ետ ստանալու համար պատրաստ կլինի այդ անիմաստ դարձած օրգանի փոխարեն իր մարմնից կտրել ու հանձնել առողջ, օրգանիզմի գոյության համար կենսականորեն անհրաժեշտ սիրտը, լյարդը եւ թոքը:

Հայաստանը, եթե նայեք քարտեզի նրա ուրվագծին, նման է սիրուն աղջկա: Այդ ուրվագիծը միշտ չէ, որ այդպիսին է եղել: Դարեր առաջ, երբ մենք դեռ ազգ էինք, այլ ոչ թե թաղերի, կլանների, թայֆաների, ընտանիքների համախմբում, այդ ուրվագիծն ուրիշ էր՝ մեծ էր ու տձեւ: Բայց վայրի գազանները, հիմնականում՝ գայլերը եւ շնագայլերը, դարերի ընթացքում այնքան կծմծեցին նրա մարմինը, որ սովետականացվելուց հետո նա ստացավ այդպիսի պատկեր:

Այդ գեղեցկուհու կույրաղիքը, որը կոչվում էր Արծվաշեն, դեռ Սովետի օրոք խորամանկ գազանն անջատել էր կնոջ մարմնից, իսկ հետո՝ նաեւ սեփականաշնորհել: Հիմա նա առաջարկում է վերադարձնել այդ անիմաստ դարձած օրգանը՝ փոխարենը պահանջելով իրեն հանձնել աղջկա սիրտը, լյարդը եւ թոքը, որոնք կոչվում են Վերին Ոսկեպար, Բարխուդարլու-Սոֆուլու եւ Տիգրանաշեն: Մինչդեռ, առանց դրանց՝ գեղեցկուհին կվերածվի լիակատար հաշմանդամի, որը ստիպված կլինի գոյատեւել արհեստական սրտի, լյարդի եւ շնչառության սարքավորումների օգնությամբ: Ընդ որում, այդ սարքավորումների անջատիչը կմնա գազանի թաթերում, եւ նա երբ կուզենա, կմիացնի, երբ կուզենա, կանջատի դրանք:

Դեռ մի քանի տարի առաջ ՀՀ ամենաբարձր մակարդակի իշխանավորները խոստովանում էին, որ չկան փաստաթղթեր, որոնք կհաստատեն, թե այդ գյուղերը հանդիսանում են ադրբեջանական տարածքներ՝ էքսկլավներ: Այսօր նրանք կարծես մոռացած լինեն նախկինում իրենց ասածները եւ այդ հարցի լուծումը հասցեագրում են սահմանազատման հարցի շուրջ բանակցող Հայաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետներին: Եվ եթե ՀՀ փոխվարչապետն ասի, թե իբր տեսել է նման փաստաթուղթ, հանրաքվեի կարիք չի զգացվի: Բայց մեր հիշողության մեջ դեռ թարմ է, թե ինչպես մեր վարչապետն ասաց, որ ստուգել է ՀՀ չորրորդ նախագահի փաստաթղթերը եւ համոզվել է, որ նա երկքաղաքացի չէ: Մինչդեռ հետագայում պարզվեց, որ Արմեն Սարգսյանը բացի հայկականից, ունի նաեւ այլ երկրի անձնագիր:

«Հների» ստեղծած Սահմանադրությունն իդեալական չէ, բայց գեղեցկուհու մարմնի որեւիցե մասը փոխանակելու կամ կտրել-հանձնելու թույլտվություն ստանալու համար պահանջում է անցկացնել հանրաքվե, ինչը նորմալ եւ աշխարհում ընդունված պահանջ է:

«Նորերն» իշխանության գալու հենց սկզբից կրքոտ ցանկանում էին փոխել հիմնական օրենքը: Թվում էր, թե դրա նպատակը պետք է լիներ հրաժարվելը Սահմանադրության այն արտառոց դրույթից, ըստ որի՝ ընտրությունների արդյունքում կայուն խորհրդարանական մեծամասնություն, այսինքն՝ առնվազն 52 տոկոս չստացած ուժն արհեստականորեն դառնում է այդպիսին: Եվ հնարավորություն է ստանում առանց որեւիցե խոչընդոտի ընդունել իր համար ցանկալի ցանկացած օրենք: Նիկոլ Փաշինյանը հենց դա էր խոստացել՝ մինչ իշխանության ղեկին տիրանալը: Նկատենք, որ այդ դրույթն այնքան արտառոց է, որ Հայաստանից բացի գործում է աշխարհի միայն մի երկրում:

Բայց վարչապետ դառնալուց հետո Փաշինյանը փոխեց իր կարծիքը եւ որոշեց պահպանել Սահմանադրության այդ դրույթը: Այդուհանդերձ, չփոխեց հիմնական օրենքը փոխելու մտադրությունը: Եվ այդ ցանկությունն այնքան մեծ էր, որ դրան ուղղված մարդաշատ միջոցառումները կազմակերպվում էին նույնիսկ կորոնավիրուսի համաճարակի թեժ օրերին: Մինչդեռ անհրաժեշտ էր անել հակառակը՝ հայտարարել կարանտին:

Նկատենք, որ այն օրերին դեռ չկար Բաքվի պահանջը՝ փոխել ՀՀ Սահմանադրությունը՝ հանելով այնտեղից Անկախության հռչակագրի հիշատակումը: Հետեւաբար, հետաքրքիր է՝ այն ժամանակ ի՞նչն էին ցանկանում փոխել «նորերը»: Մի՞թե ճիշտ էին «չար լեզուները», թե նրանք ցանկանում են վերացնել տարածքներ հանձնելու կամ փոխանակելու համար ժողովրդից հանրաքվեի միջոցով թույլտվություն ստանալու գործող Սահմանադրության պահանջը:

Ինչ որ է, վստահ ենք, որ եթե այդ՝ իբրեւ թե ադրբեջանական հանդիսացող էքսկլավների փոխանակման հարցով անցկացվի հանրաքվե, Հայաստանում քչերը կքվեարկեն մեր սիրելի գեղեցկուհուն հաշմանդամ դարձնելու օգտին: Չնայած, ինչպես «ժողովուրդների հայր» Ստալինն էր պնդում. «Կարեւորն այն չէ, թե ինչպես կքվեարկեն, կարեւորն այն է, թե ով է հաշվելու քվեները»:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 27.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԷՀԻ ՀԱՐՍԱՆԻՔ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Զորահանդես չեղավ, մեկ էշի հարսանիք եղավ՝ կասեր Խաչատուր Աբովյանը: Դե իսկ մենք, որ այդքան վառ երեւակայություն չունենք, օգտագործում ենք «խայտառակություն» բառը՝ բնութագրելու այն վիճակը, որ Նիկոլը ստեղծել է Երեւանում: Սկսեմ այս զորահանդեսի զոհերից: Մահվան քանի՞ դեպք է արձանագրվել Երեւանում մայիսի 26-ին, եւ դրանցից քանիսն են տեղի ունեցել շտապօգնության ուշանալու պատճառով: Կամ վիճակագրություն: Բնականաբար, չկա: Ես Ավանից մինչեւ քաղաքի կենտրոն առնվազն 20 շտապօգնության ավտոմեքենա եմ տեսել՝ խցանման մեջ կանգնած: Եվ ո՞ւմ տանձին էր, որ այդ պահին Վաղո հոպարի կույրաղիքի նոպան էր բռնել, կամ Վարդուշ տատի ճնշումն էր բարձրացել: Մեռան խեղճերը՝ այդպես էլ շտապօգնության երեսը չտեսած: Անահիտ Ավանեսյան, խնդրում եմ ճշտել մայիսի 26-ի վիճակագրությունը, ներառյալ նաեւ խցանումների մեջ վատացածների թիվը:

Ոստիկանության աշխատանքի մասին ընդհանրապես կլռեմ: Տպավորություն էր ստեղծվել, որ սրանք ոչ թե նախապես որոշված փողոցներն են փակել, այլ բոլորը՝ ով որ փողոցը հասցրել, այդ փողոցն էլ փակել էր: Ուզում էի մի անցք գտնել, որ դուրս գայի համընդհանուր այդ սոդոմ-գոմորից՝ ապարդյուն: Սերժանտ Սը-քեն փակել է փողոցը, չի թողնում: Այ տղա, ես ուզում եմ շրջվել ու հետ գնալ Ավան: Չէ, փակ ա… Ես բալերից գլուխ չեմ հանում, բայց իմացողներն ասում էին, որ մայրաքաղաքի կենտրոնում ու հարակից փողոցներում 10 բալանոց խցանում է եղել ժամեր շարունակ: Ոստիկաններն ու պիցցա բաժանող հնդիկներն անգամ չեն կարողացել տեղաշարժվել:

Լավ, ինչի՞ համար է այս ամենը՝ մտածում եմ: Մենք, ախր, հաղթանակի օր էլ չունենք, որ ասեմ՝ նշում ենք: Ամեն ինչ մունդռեց՝ մեր հաղթանակներից մինչեւ հաղթանակած բանակ: Ու էն բանակը, որի շարքերում 12 հազար դասալիք կար (Աննա Հակոբյան, Նիկոլ Փաշինյան, հուշեր), որ փախել էր, ճողոպրել էր մարտադաշտից, պիտի անցնի Հանրապետության հրապարակով: Պարտված, փախած, ճողոպրած գերագույն գլխավոր հրամանատարը զորահանդես է ընդունում, ովքե՞ր են առաջնորդելու զինվորներին՝ երկչոտ, կզած, դավաճանած գեներալնե՞րը: Այս գործում երկու էշի գարի իրարից ջոկել չկարողացող Պապիկյան Սուրոն պիտի «հաղթական շրջի» զորքերի առաջ… Դուք, ինչ է, կարծում եք՝ գժանոցում ամեն ինչ այլ կերպ է լինում: Էլ Նապոլեոն, էլ Կուտուզով, էլ Մակեդոնացի… Ամբողջ օրը կռիվ-կռիվ են խաղում, պատիվ տալիս ու առնում:

Արագածի մակետն են դրել հրապարակում: Խեղճ Արագած, որ այդպիսի տեսք ունես՝ գագաթներդ կտրած, սեգ ժայռերդ կլորացրած… Բայց ի՞նչ արած, նիկոլական անգաղափարականության զոհերից մեկն էլ դու ես… Մասիսի պատկերից խորշում է մարդը: Թուրքերը վիզը կպոկեին, եթե Արարատ դներ: Վախը քի՞չ բան է: Նախապես էլ հայտարարել էր, որ այս զորահանդեսն ուժի ցուցադրության զորահանդես չէ, հարեւաններին սպառնալիքներ փոխանցելու զորահանդես չէ, այլ շոու է, որպեսզի ցույց տա, թե որտեղ եւ ինչպես է ծախսել ժողովրդի վզին դրված 8.5 միլիարդի պարտքը: Սա ոչ թե զորահանդես է, այլ նախընտրական քարոզչություն՝ պետական ռեսուրսի ափաշկարա գործադրմամբ: Ռեաբիլիտացվելու խնդիր է լուծում 44-օրյա պատերազմից հետո փախած, ժողովրդի ցասումից պադվալներում թաքնված, բայց հազար ու մի հնարքներով մարդկանց ուղեղները մաքրազարդած ու վերարտադրված Նիկոլը: Մարդիկ պետք է զորահանդես տեսնեն ու ծափ տան, փառաբանեն իրեն ընտրությունների նախօրյակին: Այլապես իր խմբակով ուր գնում՝ խայտառակվում է, բողոք, անեծք ու հայհոյանք է, որ լսում է: Ուրիշ ի՞նչ պետք է աներ այդ մթնոլորտը փոխելու համար… Դե իհարկե՝ նախընտրական զորահանդես եւ այն էլ՝ Սարդարապատի օրով:

Եվ ավարտեմ: Նիկոլը Նիկոլ չէր լինի, եթե նորմալ կազմակերպեր այս ամենը: Նրա ամեն քայլը հարայ-հրոցով է ուղեկցվում: Արցախում ճոճղալը, անձամբ զորահավաք կազմակերպելը, ընդդիմության հասցեին լուտանքներ թափելը, քարոզարշավի շրջանակներում մարդկանց քաշքշելը, սպառնալը, սեփական մեղքերի մեջ ուրիշներին մեղադրելը, քաղաքում նրա տեղաշարժերը… Ամեն, ամեն ինչ, որ նրա անվան հետ է կապված, ուղեկցվում է աղմուկ-աղաղակով: Բացառություն չէ նաեւ զորահանդեսը, որ նա է կազմակերպել: Մի ամբողջ էշի հարսանիք՝ կասեր Աբովյանը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am